

ՓԵՏՔՈՎ. «ՄՕՏԻԿ ԱՊԱԳԱՅԻՆ ԵՌԱԿՈՐՄ ԶԱՆԴԻՊՈՒՄ Կ՛ԱՎԵԿԱԼԵՆԸ»

Ռուսիան կ'անկնայէ, որ մօտիկ ապագային ուքրանական հարցի կարգաւորման շուրջ Միացեալ Նահանգներու եւ Ուքրանիոյ հետ եռակողմ հանդիպում տեղի ունենայ: Այս մասին «Իզվեսթիա»-ին ըսած է Զրեմլինի բանքեր Տմիթրի Փեսքով:

«Մենք յոյս ունինք, որ ատիկա մօտիկ ապագային տեղի պիտի ունենայ», ըսած է ան:

Փեսքով ընդգծած է, որ այս հարցերուն շուրջ քննարկումները արդէն տեղի ունեցած են: Սակայն, ներկայիս, ըստ անոր, Ուքրանիոյ հակամարտութեան կարգաւորման նոր առաջարկներ չկան, եւ կողմերը պիտի հանդիպին յատուկ նոր տարբերակները քննարկելու համար:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ՝ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ազրպէյճանի մէջ հաւատարմագրուած դեսպաններու այցելութիւնը Արցախի առաջին քարոզչական գործողութիւնը չէ՝ կազմակերպուած բռնակազմաւոր երկրի պետութեան կողմէ: Անկկա պարզապէս մէկ օղակն է Ազրպէյճանի պետութեան կողմէ մշակուած եւ կիրարկուող ապամշակութային քաղաքականութեան, որ կը յատկանշուի պատմութեան վերաշարադրանքով, փաստերու խեղաթիւրումով, պատկանելիութեան հետքերու ջնջումով: Գանձասարի մատենադարանի բովանդակութեան փոփոխութիւնը, Ստեփանակերտի եկեղեցւոյ քանդումը, Շուշիի եկեղեցւոյ ճարտարապետութեան փոփոխութիւնը կամ «վերաշինութիւնը», խաչքարերը քանդակողներու ինքնութեան փոփոխութիւնները կամ Վատիկանի մէջ «գիտաժողով»-ներու կազմակերպումը օղակներն են երկար շղթայի մը, որ տակաւին պիտի երկարի յայտնաբար:

Պատմութեան նենգափոխման այս քաղաքականութիւնը հիմնականին մէջ քանի մը ուղղութիւն ունի:

Առաջինը անշուշտ, հոգեւոր մշակութային կոթողներու ամբողջական քանդումն է. անոնց բնաջնջումը: Դետքերու ջնջման այս արշաւը գլխաւոր ուղղութիւնն է, որ իր նախադէպը ունի Նախիջեանի մէջ, յատկապէս գերեզմաններու եւ խաչքարերու դէմ համատարած քանդումի փաստերով:

Երկրորդը կառոյցի իբրեւ թէ պահպանումն է՝ ճարտարապետութեան վերափոխումով, հայկական ճարտարապետութիւնը յատկանշած բոլոր ոճերը փոխարինելով, նոյնիսկ իսլամական ոճ ներմուծելով հաւատքի տուեալ կեդրոնի նոր շինարարութեան մէջ:

Երրորդը՝ պահպանելով կառոյցը, գանոնք ուտիական կամ աղուանական կոթողներ ներկայացընելով: «Փաստելու» համար, որ այս տարածքին մէջ հայեր չեն ապրած հին ժամանակներուն, այլ ուտիներ կամ աղուաններ, որոնք շառափոնները այսօրւան Ազրպէյճանի ժողովուրդի մասն են:

Այս երրորդ կէտը մշակութային ցեղասպանութեան փափուկ մասն է: Առանց քանդումի, դիմափոխութիւն է, որ տեղի կ'ունենայ պատմութեան խեղաթիւրման կանոններով: Այս նուրբ ուղղութիւնը ունի իր ենթաուղերձները: Ըսել կ'ուզուի այսպիսով, որ հոգեւոր-մշակութային կեդրոնները կը պահպանուին պետութեան կողմէ: Այն կոթողները, որոնք հայութեան հետ կապ չունին, այլ ստեղծագործութիւնն են աղուաններուն եւ ուտիներուն: Պատկանելիութեան փաստի փոփոխութիւնը նախ անշուշտ հայկական հետքերու հեռացումն է, հետեւաբար հայութեան կողմէ հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանման պահանջներուն ջրումը, երկրորդ՝ այնպիսի ազգաբնակչութիւններու մասին է խօսքը, որոնք այսօր իբրեւ ազգ գոյութիւն չունին եւ որոնք յատկապէս Ազրպէյճանէն պահանջ չունին:

Այս ուղղութիւնը հասաւ նաեւ Վատիկան, ուր Պաքուին կազմակերպեց այս թեգերը «փաստարկող» գիտաժողովներ: Կնդիր գոյութիւն ունի անշուշտ համաքրիստոնական կեդրոններ կատարած ազրպէյճանական թափանցումներուն գծով: Պէտք է մանրակրկիտ ուսումնասիրել նաեւ դեսպաններուն այն ցանկը, որոնք յօժարակամ ակաւատես են վկայ դարձած էին, հետեւաբար՝ մասնակից Պաքուի նենգափոխման այս արշաւին:

Ազրպէյճանի այս արշաւը պիտի շարունակուի: Թէ՛ համաքրիստոնական կեդրոնները են թէ՛ տարբեր երկիրներու դիւանագիտական ներկայացուցիչները հանգիստ կ'ընդառաջեն նման հրաւերներու եւ մասնակից կը դառնան խեղաձեման այս արշաւներուն: Այս ընդառաջումները կրնան վկայակոչել, բողոքի պարագային, Երեւանի մեծ հաշուով լուծութիւնը, չբողոքելը, հոգեւոր-մշակութային ժառանգութեան տեր չկանգնելու պահուածքը:

Ազրպէյճանը պիտի շարունակէ իր արշաւը: Խընդիրը մշակութային, կրօնական կեդրոններուն լուռ մնալն է կամ ընդառաջելը նման հրաւերներու: Զայկական կողմէն բողոքը կ'արժարծեն Զայ եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդները,, Զայ դատի համակարգը, սփիւռքեան կարգ մը կազմակերպութիւններ:

Այս բողոքները գիտական հիմունքով, փաստաւերաբարական տուեալներով պիտի շարունակեն արժարծել ինչպէս հայաստանեան, այնպէս նաեւ սփիւռքեան հոգեւոր ազգային կեդրոններ: Բացայայտելու համար Ազրպէյճանի կողմէ շարունակելու մշակութային ցեղասպանութեան բոլոր ծալքերը եւ մանաւանդ միջազգային ընտանիքի մշակութային կառոյցներուն մօտ փորձեն ապահովել միջամտութեան քայլերը:

Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանման պայքարը հրատապ խնդիր է: Ազրպէյճանի մշակութային ցեղասպանութեան դէմ պայքարիլը՝ հրամայական: Պաշտօնական Երեւանը, խաղաղութիւնը չխոչընդոտելու պատրուակով, հրաժարած է այդ պայքարէն: Զայկական կողմը այլ ռազմավարութիւն որդեգրելու անհրաժեշտութեան դիմաց է:

ՕՍԱՆԻ ՄԵՋ ԻՐԱՆ-ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ ԺՈՂՈՎԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱՒ



Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանքեր Իսմայիլ Պաղաւի յայտարարեց, թէ Արաբական ծոցի երկիրներու հետ երէկ Օմանի Սալալա

քաղաքին մէջ նախատեսուած հանդիպումը չեղեալ նկատուած է Սեւտական Արաբիոյ խնդրանքով՝ Եմէնի մէջ

Շաբ.ը՝ էջ 8

ՔԱՅ. «ՅԸԶՊԱՆԼԼԱՅԻ ԶԻՆԱԹԱՓՈՒՄԵՆ ԱՌԱՅ ԶԱՐԱԲԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ԱՊԱՅՈՎԱԿԱՆ ԳՕՏԻԵՆ ՊԻՏԻ ԶՅԵՈԱՆԱԼԵ, ՊԻՏԻ ԶՆԱՅԱՆՁԵՆԸ ԿԱՍ ՎԵՐԱՏԵՂԱԿԱՅՈՒՄ ՊԻՏԻ ԶԿԱՏԱՐԵՆԸ»

Իսրայելի պաշտպանութեան նախարար Իսրայէլ Զաց յայտարարեց. «Յրգպալլայի զինաթափումէն առաջ հարաւային Լիբանանի մէջ ապահովական գօտիէն պիտի չհեռանանք, Պիտի Զնահանքէնք Կամ Վերատեղակայում պիտի չկատարենք»:

Զաց Նշեց, որ Ալի Թահեր բարձունքները Լիբանանի մէջ դեղին գիծի եւ իսրայէլեան ապահովական շրջանին մաս կը կազմեն՝ աւելցնելով, որ իսրայելեան բանակը պատրաստուած է



Զրգպալլայի կամ որեւէ այլ կողմի Ալի Թահեր բարձունքներ վերադառնալու փորձը արգիլելու:

Շաբ.ը՝ էջ 8

ԿԱԼԵՍԻ, ՍԿՈՎՏԻՈՅ ԵՒ ԶԻՄԻՍԱՅԻՆ ԻՐԼԱՆՏԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԿԱԶՄԵՆ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԻՐԱՒՈՒՆԶԻ ՄԱՍԻՆ ՅՈՒՇԱԳԻՐ ԱՏՈՐԱԳՐԵՑԻՆ

Զիւսիսային Իրլանտայի, Կալէսի եւ Սկոթլոյ առաջին նախարարներ Միշէլ ՕՄիլը, Ռուս Ալի Եորվերթը եւ Ճոն Սուիլին ստորագրած են փոխհասկացողութեան յուշագիր, որուն մէջ ամրագրուած է այդ շրջաններուն ինքնորոշման իրաւունքը: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ փաստաթուղթը ստորագրուած է Զարոյիֆի մէջ հանդիպումի ժամանակ:

«Սքայ Նիուզ»-ի կողմէ մէքբերուած փաստաթուղթի հատուածներուն հա-



մաձայն, ղեկավարները Բրիտանիոյ կառավարութեան կոչ ուղղած են՝

Շաբ.ը՝ էջ 8

ԸՍՏ ԹՐԲԱԿԱՆ ԿԱՌԱԿԱՐԱԿԱՆ ԱՂԲԻՐԻ ՄԸ

ՌՈՒՄԻՈՅ ԵՒ ՈՒԲՐԱՆԻՈՅ ՄԻՋԵՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊՈԼՍՈՅ ՄԵՋ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ ԿԱՐԵԼԻ Է ԵՒ ՅԱՐՄԱՐ

Թրքական կառավարական աղբիւր մը ռուսական «Սփութիք» լրատու գործակալութեան յայտնեց. «Թուրքիոյ կարծիքով՝ Ուքրանիոյ հակամարտութեան վերջ տալը միայն բանակցութիւններու ճամբով իրագործելի է»:

Ան Նշած է. «Պոլիսը փաստած է երկխօսութեան հարթակ ըլլալու իր յարմարաւետութիւնը, եւ Ռուսիոյ եւ Ուքրանիոյ միջեւ բանակցութիւններու այդտեղ շարունակումը կարելի ու յարմար է»:

Նախքան այդ, Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութիւնը յայտարարած էր, թէ կը փա-



փաքի, որ բանակցութիւնները Պոլսոյ մէջ գումարուին:

Նշենք, որ շրջանառութեան մէջ են այդ բանակցութիւններու Ապու Տապիի մէջ հիւրընկալման կարելիութեան մասին լուրերը:

ԼԵՌՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

«ԳԱՆՁԱՍԱՐԻ ԱՐԺԷՔԱՒՈՐ ԳԻՐՔԵՐԸ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՍՆԱԿ ՏԵՂԱՓՈԽՈՒԱԾ ԷԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»



Արցախի մշակոյթի նախկին նախարար, Զայ առաքելական եկեղեցւոյ Արցախի թեմի թեմական խորհուրդի ատենապետ Լեռնիկ Յովհաննիսեան Ազրպէյճանի նախագահի օգնական Զիքմեթ Զահիւի կողմէ հայկական ձեռագիր մատենաներու նմուշներու ցուցադրութիւնը «ձեռնածութիւն» որակեց:

Զիքմեթ Զահիւ Գանձասարի մատենադարանի ցուցասրահին մէջ անցեալ շաբաթավերջին դիւանագետներուն ցուցարարած էր, իբրեւ թէ, հին հայկական գիրքերը: Բանալով ձեռագիրներու նմուշները, ան դիւանագետներուն ցոյց տուած էր այդ գիրքերուն դատարկ էջերը, իսկ ներկայ դիւանագետները անոր արձագանգած էին ծիծաղով:

Շաբ.ը՝ էջ 8

ԱՐԱՄԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ «ԿԸ ՅՈՒՄԱՆՔ, ՈՐ «ԻՐԱԿԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՄԱՍԵՐ ՇՈՒՇԻԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԻՆ ԶԵՆԹԱՐԿՈՒԻՆ»



Արամ Ա. կաթողիկոս դիմատետրի իր էջին վրայ կատարած է գրառում մը, միաժամանակ ներբեռնելով այն տեսերիզները, ուր Ազրպէյճանի քաղաքական դէմքեր եւ եւրոպացի դիւանագետներ կը պարեն Շուշիի մէջ ու հայկական կոթողները կը ներկայացընեն իբրեւ աղուանական մշակոյթի նմուշներ:

Ստորեւ՝ գրառումը.

Շաբ.ը՝ էջ 8

ԿՐՈՆՕ. «ԴԱՐԱԲԱՂԻ՝ ՆԱԽԱՊԷՍ ԶԱԿԱՍԱՐՏՈՒԹԵՆԵՆ ՏՈՒԺԱԾ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԶԱՅԿԱԿԱՆ ԶԱՐՈՒՍ ՅԵՏԸԸ ԶԵՄ ՎԻՃԱԿԵՐ»



Մշակութային ժառանգութեան պահպանումն ու անոր աշակցիլը ոչ միայն խաղաղութեան հողովոյթներու կարեւոր մասն են, այլ նաեւ էական արժեք են Եւրոպական Միութեան համար: Այս մասին «Արմենփրես»-ի թղթակիցին հետ գորոյցի ընթացքին յայտարարեց Զարաւային Կովկասի եւ Վրաստանի ճրգ-նաժամի հարցերով Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Մակտալենա Կրոնտն, որ 14 սեպտեմբերին Զայաստանի Զանրապետութեան արտաքին գործոց եւ միջազգային առեւտուրի նախարարի տեղակալ Վահան Կոստանեանի ուղեկցութեամբ այցելած էր Մատենադարան Մ. Մաշտոցի անուան հին ձեռագիրներու գիտահետազօտական հիմնարկ:

Շաբ.ը՝ էջ 8

ՇԵՆՔԸՐ. «ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԻՋԵՒ ՇՐՋԱԳԾԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԱՌԱՋ ՊԻՏԻ ԶՎՃՌՈՒԻ»

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Մերձատր Արեւելքի հարցերով նախկին օգնական Տեյվիտ Շենքըր յայտնեց, որ Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ շրջագծային համաձայնութիւնը յառաջիկայ հոկտեմբերին որոշուած իսրայէլեան ընտրութիւններէն առաջ պիտի չվճռուի:



«Ներկայիս ընթացող ժողովներուն նպատակը միայն բանակցային հոլովոյթի շարունակութիւնը պահպանելն ու անոր տապալումը կանխարգիլելն է», նշեց Շենքըր:

«Լիբանանեան բանակէն կը պահանջուի ընդլայնել զգայուն շրջաններուն մէջ իր տեղակայումը եւ ճիշդալարայի վերատեղակայման արգելք ըլլալ», ըսաւ ամերիկացի նախկին պաշտօնատարը՝ աւելցնելով. «Այս առաքելութեան մէջ անոր յաջողութիւնը վճռական ազդակ պիտի ըլլայ Իսրայէլը իր բռնագրաւած շրջանէն աստիճանաբար հեռանալու մղելու մէջ»:

«Կը նախատեսուի, որ բանակցային յառաջիկայ փուլերուն ընթացքին գերիներու փոխանակում եւ կարգ մը շրջաններ իսրայէլեան հեռացում տե-

ղի ունենայ, սակայն ատկեա հոկտեմբերի ընտրութիւններէն առաջ տեղի պիտի չունենայ», շեշտեց Շենքըր:

«Միացեալ Նահանգները պէտք է առանցքային դեր խաղան լիբանանեան բանակի զգայուն շրջաններուն մէջ իր պարտականութիւնը կատարելէն վստահ ըլլալու համար ազդու ստուգման գործիքակազմի հաստատման մէջ՝ Իսրայէլը հեռանալու քաջալերելու նպատակով», ըսաւ ան:

«Լիբանանեան պետութիւնը պէտք է պետութեան գերիշխանութիւնը պարտադրել եւ վերջ տայ իր որոշումին վրայ՝ իրանեան տիրապետութեան, սակայն թեիրան իր դաշնակիցին՝ Յըզպալլային աջակցելէ ետ պիտի չկանգնի եւ պիտի շարունակէ անոր աջակցութիւն տրամադրել», նշեց Շենքըր:

ԼԻԲԱՆԱՆ-ԻՍՐԱՅԷԼ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութենէն պաշտօնատար մը յայտարարեց, թէ Լիբանանի եւ Իսրայէլի դեսպանները այս շաբաթ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան մէջ պիտի գումարեն ժողով մը՝ քննարկելու ներկայ զարգացումներն ու գործադրման շարունակութիւնը «եռակողմ շրջագծին», որ տակաւին Լիբանանի գերիշխանութեան ու Իսրայէլի անվտանգութեան վերականգնման միակ գործադրելի գործիքակազմն է:



Պաշտօնատարը նաեւ յայտնեց, որ Լիբանան-Իսրայէլ պաշտօնական բանակցութիւններուն յաջորդ փուլը հոկտեմբերին պիտի գումարուի Յոմի մէջ:

ՆԱԽԿԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՏՈՐԻ ՇԱՄՈՒՆ ՄԱՀԱՅԱՒ



Նախկին երեսփոխան, Ազգային ազատականներու կուսակցութեան նախկին ղեկավար ու պատուոյ նախագահ Տորի Շամուն երէկ մահացաւ:

Տորի Շամուն ծնած է 1931 թուականին, Տեյր Զամար: Ան որդին է հանրապետութեան նախկին նախագահ եւ Ազգային ազատականներու կուսակցութեան հիմնադիր Զամիլ Շամունի:

Շամուն 2009 թուականէն մինչեւ 2018 թուական Շուֆի ընտրաշրջանէն երեսփոխան եղած է, իսկ 1998-էն մինչեւ 2008 Տեյր Զամարի քաղաքապետ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

●«ՆԻՏԱ ՈՒՄԱՆ» օրաթերթ. «Բանակի աջակցութեան Փաքիզի նախապատրաստական ժողովի նախօրեակին Աուն-Մաքրոն-Ապտալա Բ. վեհաժողով մը տեղի պիտի ունենայ»:

●«ԺՈՒՐՅՈՒՐԻՎ» օրաթերթի տեղեկութեան համաձայն, «մինչեւ հիմա Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ բանակցութիւններու ո՛չ սեպտեմբերին, ո՛չ ալ հոկտեմբերին ճշդուած թուական գոյութիւն ունի»:

●ԼԱՒԱՏԵՂԵԱԿ աղբիւրներ «Տիար» օրաթերթին. «Լիբանանի եւ Իսրայէլի դեսպաններու հանդիպումը



տեղի կ'ունենայ Միացեալ Նահանգներու որոշումով ու մղումով: Ուաշինկթըն անհրաժեշտ կը նկատէ բանակցութիւններու յետաձգուած փուլը փոխարինել յառաջընթացով մը, որպէսզի երկու կողմերն ալ չըզգան, թէ բանակցային հոլովոյթը անարդիւնաւետ է»:

●ԲԱՆԱԿՑԱՅԻՆ հոլովոյթին ծանօթ աղբիւր մը «Ժումհուրիա» օրաթերթին. «Իսրայէլի հետ բանակցութիւններու փուլերը քաղաքական եւ դիւանագիտական լուծումը դրին ճիշդ ուղիի վրայ, եւ մենք կըրցանք ձեռք բերել շրջագծային համաձայնագիրը ամերիկացի հովանաւորին անմիջական հովանաւորութեամբ ու գործընկերութեամբ, սակայն Իսրայէլի կողմէ ձգձգումը եւ համաձայնագիրի խախտումը այս ամբողջ հոլովոյթը վերածեցին դատարկ շրջանակի մէջ պտոյտի»:

●ԲԱՆԱԿՑԱՅԻՆ հոլովոյթին ծանօթ աղբիւր մը «Ժումհուրիա» օրաթերթին. «Բոլոր լիբանանցիները իրաւունք ունին կասկածի տակ առնելու բանակցութիւններու եւ շրջագծային համաձայնագիրի օգտակարութիւնը, քանի տակաւին Իսրայէլ սկիզբէն ի վեր կը խաթարէ այս հոլովոյթը եւ չէ ձեռնարկած որեւէ քայլի, որ համաձայնագիրին նկատմամբ իր յանձնառութեան հաւաստիութիւնը կ'ապացուցէ, այլ ընդհակառակն՝ կասկածելի ձեւով կ'ուժեղացնէ իր յարձակումները»:

●ԱՐԲԻՐՆԵՐ «Տիար» օրաթերթին. «Ցայտիկ է, թէ Նեթանիահուն բացարձակապէս խանդավառ չէ բանակցութեան սեղան նստելու եւ Ուաշինկթընի պահանջած որեւէ զիջում կատարելու յառաջիկայ ընտրութիւններուն նախօրեակին, որոնց մէջ կը փորձէ առաջնահերթութիւնը տալ մագլցումին ու մարտադաշտին»:

Շաբ.ը՝ էջ 8

ՄԱՀԱՉԴ

Տիկին Շողիկ Թերզեան-Կիրակոսեան եւ զաւակունց Տեր եւ տիկին Սիմոն եւ Սեդա Թերզեան

եւ զաւակունց Տեր եւ տիկին Պերճ եւ Սալթի Գլըճեան եւ զաւակունց Տեր եւ տիկին Շահէ եւ Դանիա Թերզեան

եւ զաւակունց Հանգուցեալ Մինաս Թերզեանի ընտանիք

Հանգուցեալ Կարապետ Թերզեանի ընտանիք Տեր եւ տիկին Անդրանիկ Բարսեղեան եւ ընտանիք Տեր եւ տիկին Վարուժ Բարսեղեան եւ ընտանիք Օրիորդ Ալիս Բարսեղեան Թերզեան եւ Կիրակոսեան ընտանիքներ Գլըճեան եւ Աւագեան ընտանիքներ Տեմիրճեան եւ Բարսեղեան ընտանիքներ Միսիթարեան եւ Գապաբեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գումեն իրենց մօր, մեծ մօր, զոքանչին, քրոջ եւ հարազատին՝

ԺԱՔԼԻՆ ԹԵՐԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ կիրակի, 13 սեպտեմբեր 2026-ին:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ երեքշաբթի, 15 սեպտեմբերին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Չալքայի Հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ գերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին թաղման արարողութենէն ետք, մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Ս. Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ, ինչպէս նաեւ չորեքշաբթի, 16 սեպտեմբերին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն սկսեալ, մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Նոյն վայրին մէջ:

●ԾԱՆՕԹ.- Փոխան ծաղկեպսակի՝ կը խնդրուի Նուիրատուութիւնները կատարել ԼՕԽ-ի «Աղանի Փափագեան» մասնաճիւղին:



ՄՈՒՍԱԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿ ԵՒ ԱՅՆՃԱՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 87-ԱՄԵԱԿ

● **Չորեքշաբթի, 16 Սեպտեմբեր 2026**

ՄՈՒՍԱԼԵՐ - ԱՅՆՃԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝ ՄՈԿԱՄԵ ԱՄԱԳ ԲՅՆՅ. ԸՐԻԳԵԱՆԻ «ՅՈՒՇԵՐ» ՀԱՏՈՐԻ ԳԻՆԵՁՕՆ, երեկոյեան ժամը **7:30**-ին, «Սարգիս Չէյթլեան» կեդրոնէն ներս:

● **Հինգշաբթի, 17 Սեպտեմբեր 2026**

ՀԱՄԱԶԱՅԻՆԻ «ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ» ՄԱՍՆԱՃԻՂ՝ ԿԱՐՊԻՍ ԲԷՆՏԻՐՃԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ, երեկոյեան ժամը **7:00**-ին, «Գալուստ Կիլլաքէնկեան» սրահին մէջ: ԱՅՆՃԱՐԻ ԲԱՆԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՕՆ, երեկոյեան ժամը **8:30**-էն սկսեալ, Դալար անկիւնէն ներս:

● **Ուրբաթ, 18 Սեպտեմբեր 2026**

Լ.Օ.Խ.-Ի «ԱՂԹԱՄԱՐ» ՄԱՍՆԱՃԻՂ՝ ՏՈՂՄԻԿ ԵՐԵԿՈՅ, երեկոյեան ժամը **8:00**-էն սկսեալ, «Սարգիս Չէյթլեան» կեդրոնի շրջափակէն ներս:

● **Շաբաթ, 19 Սեպտեմբեր 2026**

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿԻ ԵՒ ԱՅՆՃԱՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 87-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ, երեկոյեան ժամը **8:30**-էն սկսեալ, Մուսալերան յուշարձան-համալիրի կողքին:

ՊԱՏԳԱՄԱԽՕՍ՝ ԸՆկ. Ալպէր Պալապանեան
Հ.Յ.Դ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ
ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ՝

● **Կիրակի, 20 Սեպտեմբեր 2026**

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՍԱՀ ՊԱՏԱՐԱԳ, ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 18 ՆԱՀԱՏԱԿԼԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ, ՄԱՏԱՂԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՇԽՈՒՄ, ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ՝ ԳԵՐՃ. ՏԵՐ ԸԱՀԷ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ, առաւօտեան ժամը 10:00-ին «Ս.Պօղոս» եկեղեցւոյ մէջ:

Հ.Յ.Դ «Կարմիր Լեռ» Կոմիտէի
Դաստիարակչական - Քարոզչական Յանձնախումբ

ՎԵՐԱՄՈՒՏԸ՝ ԴԱՍԱՐԱՆԷՆ ԱՆԴԻՆ

Կրնանք երկարորեն վիճիլ եւ վստահաբար յարթական դուրս գալ այնպիսի վեճէ մը, ուր կ'արժարժունի ու կասկածի տակ կ'առնուին՝ լիբանանահայ վարժարանին այժմէականութիւնը, Նորարարութիւններուն հետ քայլ պահելու անոր պատրաստութիւնն ու պատրաստակամութիւնը, անոր կողմէ կրթական ժամանակակից հասկացողութիւններու կիրարկումը եւ նման այլ հարցեր:



Ի վերջոյ, ինչի՞ մասին է խօսքը, երբ ոչ իրազեկ անհատներ կը քննադատեն հայ դպրոցը եւ անոր ընդհանուր մակարդակը: Ի՞նչ է փնտռուածը՝ երկու հատ աւելի գումարուր ու փայլուն դասագի՞րը, քանի մը մեթոդ աւելի մեծ բա՛կ, Նորոգուած շէ՛նք եւ դասարանե՛ր, աւելի մեծ մարզադա՛շտ, արդիական պատտառնե՛ր, թե՛ արտաքինապէս աւելի տպաւորիչ ու «ժամանակակից» թուացող միջավայր մը:

Անշուշտ այս բոլորը կարելոր են եւ ցանկալի: Բայց երբ դպրոց մը, ըլլայ անիկա տարր թէ հայ, իր ունեցած միջոցները կը գործածէ իբրեւ իր գերազանցութեան գլխաւոր փաստ եւ անոնց ցուցադրութեամբ կը բաւարարուի ու կը հպարտանայ, անիկա զոհ կը դառնայ ինքնանպատակ, ենթակայական եւ ինքնագոհ զնահատումի. որովհետեւ ի՞նչ կը ներկայացնեն այս բոլորը, երբ զանոնք կը համեմատենք մարդուն միտքին եւ հոգիին առողջութեան, արժանապատիւ ու մաքուր ապրելակերպի, ապահով միջավայրի, փոխադարձ յարգանքի, պատկանելիութեան եւ հաւաքական հարազատութեան զգացումին:

Կարելի է անվարան հաստատել, որ դպրոցի մը իրական որակը լուսանկարուող, ցուցադրուող կամ թիւերով չափուող երեւոյթներուն մէջ չի կայանար: Բանիմաց մարդը անշուշտ գիտէ, որ դպրոցի ֆիզիքական պայմանները, ուսուցողական միջոցները եւ մակարդակի բարձրացումին նպաստող բոլոր տուեալները չափազանց կարելոր են կրթութեան ու դաստիարակութեան յաջող ընթացքը ապահովելու համար: Վերոնշեալ օրինակները երբեք չեն նսեմացներ այդ բոլորին կարելորութիւնը, ոչ ալ՝ զանոնք ապահովելու ուղղութեամբ տարուող անսակարկ աշխատանքն ու հետետողական ճիգը: Զսանմէկերորդ դարուն անոնք այլեւս բնականօրէն ակնկալելի եւ անհրաժեշտ աղբիւրներ են, որոնց ապահովումին համար մեր դպրոցները գնահատելի եւ երբեմն ալ սպառող ճիգ կը թափեն:

Իրատեսութիւնը, սակայն, կը պահանջէ նաեւ ընդունիլ, որ լիբանանահայ դպրոցը այսօր միշտ չէ, որ կը ներկայանայ անցեալի իր երբեմնի փայլով: Աշակերտութեան թիւը որոշ պարագաներու նուազած է, միջոցները՝ սահմանափակուած, պայմանները՝ դժուարացած, իսկ կրթական մրցակցութիւնը՝ աւելի սրած: Մեր դպրոցները կրնան չունենալ այն բոլոր հնարաւորութիւնները, որոնցմով ուրիշներ կը ներկայանան հանրութեան: Այս իրողութիւնները ո'չ պետք է ծածկել, ո'չ ալ՝ մեղմացնել: Բայց նոյնքան սիւսլ պիտի ըլլար անոնցմէ եզրակացնել, թէ հայ դպրոցին արժեքն ու անհրաժեշտութիւնը նուազած են:

Աշխարհի վրայ տարածուած բազմաթիւ ազգային, լեզուական, կրթական եւ մշակութային փորձառութիւններու վերաբերող հետազօտութիւններ ցոյց կու տան, որ մայրենի լեզուին եւ մշակութային ինքնութեան տեղ տուող դպրոցը միայն գիտելիք փոխանցող հաստատութիւն չէ: Անիկա պատկանելիութեան, ինքնութեան, մասնակցութեան եւ ազգի շարունակականութեան միջավայր է: Դետեւաբար հայ դպրոցին գոյութիւնը կարելի չէ արժեւորել միայն այն չափանիշներով, որոնցմով դպրոցները կը մրցին իրարու հետ: Անիկա կրնայ միշտ առաջինը չըլլալ մրցակցութեան բոլոր ցուցանիշներուն մէջ, բայց ատիկա ո'չ անոր արժեքը կը նուազեցնէ, ո'չ ալ՝ անոր գոյութեան անհրաժեշտութիւնը: Դայ դպրոցը կը շարունակէ իր երթը, ոչ թէ որովհետեւ պարտաւոր է պահպանել անցեալը, այլ որովհետեւ տակաւին ուիի ներկայ եւ ապագայ կերտելու անփոխարինելի գործ:

Դայ դպրոցն ու անոր ազգային առաքելութիւնը պաշտպանելը չի նշանակեր զայն խեղափոխանացնել եւ անոր հարցերը քողարկել. ընդհակառակն, ատիկա կը նշանակէ իրատես, պատասխանատու եւ յուսալի մօտե-

ցումով անոր ուժեղ կողմերը վեր առնել ու ամրապնդել, իսկ սուր կողմերը՝ ընդունիլ եւ բարելաւել: Ահա ճիշդ ինչ է, որ ի յայտ կու գայ սովորական «անդին» պահպանող, կառուցող եւ զարգացող գործօններուն կարելորութիւնը: Այն գործօններուն, որոնք, ըստ ժամանակակից մանկավարժական ուսումնասիրութիւններուն, կը կազմեն կրթական առաքելութեան խորքային հիմքը, եւ առանց որոնց՝ մնացեալ բոլոր գործօնները կըրնան կորսնցնել իրենց իմաստն ու ազդեցութիւնը: Ի վերջոյ, շէնքը կարելի է Նորոգել, դասագիրքը՝ փոխել, բակը՝ ընդարձակել, սարքաւորումը՝ արդիականացնել, աղբիւրներն ու յարմարաւետութիւնները՝ այս կամ այն չափով ապահովել: Մարդը, սակայն, եւ անոր հոգեկան, մտային ու ընկերային առողջ վիճակը կարելի չէ ամենուրեք գտնել:

Ուրեմն ի՞նչն է, որ կը շինուի, կը կառուցուի եւ կ'ամրապնդուի հայ դպրոցին դասարանէն «անդին»: «Անդին»-ը միայն այն չէ, ինչ որ կը պատահի դասապահէն կամ դասարանէն դուրս: Անիկա այն ամբողջ աշխարհն է, զոր հայ դպրոցը այսօր կը կառուցէ վաղեւան լիբանանահայութեան համար: Դասարանէն ու դասապահէն «անդին»-ը այն պահերն ու փորձառութիւններն են, որոնց ընդմէջէն դպրոցին ոգին զաղափարէ կ'անցնի կեանքի, ուր աշակերտը ոչ միայն կը սորվի, այլ նաեւ կը փորձէ, կը սխալի, կը համագործակցի, կը նախաձեռնէ, կը ծառայէ, կը վիճի, կը լսէ, պատասխան կը տա՛նայ եւ աստիճանաբար կը դառնայ այն մարդը, որ վաղը պիտի մարմնաւորէ մեր ազգային դիմագիծը:

Այս իմաստով, «դասարանէն անդին»-ը անմիջականօրէն կը կապուի նկարագրային արժանիքներու եւ տարբեր կարողութիւններու կազմաւորումին հետ՝ դպրոցական կեանքի տարբեր աշխատանքներուն ընդմէջէն: Օրինակի համար, կրթական կեանքին մաս կազմող աշակերտական խորհուրդները դպրոցական մարմիններ չեն միայն. անոնք մասնակցութեան, պատասխանատուութեան եւ ժողովրդավարական մշակոյթի առաջին փորձառութիւններն են: Խմբային աշխատանքը միայն ուսուցողական մեթօտ չէ. անիկա ապագայ համայնքային համագործակցութեան փորձադաշտն է: Կամաւոր աշխատանքներն ու բարեփրական այցելութիւնները միայն աշակերտական ծառայութեան նուիրած յատուկ օրեր չեն. անոնք հանրային պատասխանատուութեան վարժութիւններ են: Աշակերտին ծայն տալը ժամանակակից մանկավարժութեան նորաձեւ արտայայտութիւն չէ միայն. անիկա ապագայ առաջնորդութեան նախապատրաստութիւն է:

Ահա թէ ինչո՞ւ «անդին»-ը կը նշանակէ գիտելիքէն անցում դէպի կարողութիւն, պատկանելիութիւն՝ մասնակցութիւն, ժառանգութենէ՝ պատասխանատուութիւն, իսկ պահպանումէ՝ ստեղծագործ շարունակութիւն: Եւ ինչ է, որ կը կազմաւորուին անհատներ, որոնք նախաձեռնող են եւ ոչ՝ կուրօրէն հետեւող, որոնք կարծիք ունին, զայն արտայայտել գիտեն, բայց նաեւ գիտեն լսել ու յարգել ուրիշին կարծիքը. անհատներ, որոնք կըրնան՝ տարբերութիւններու մէջ միասին աշխատիլ, պատասխանատուութիւն ստանձնել, կազմակերպել, արարել, նոր լուծումներ առաջարկել, որոնք ոչ միայն կը պատկանին ազգին, այլեւ կը զգան, որ անոր բարօրութիւնն ու յառաջդիմութիւնը իրենցմէ ալ կախեալ են. որոնք մակերեսային չեն եւ ոչ ալ՝ անտարբեր, որոնք անձնական շահն ու փառասիրութիւնը հաւաքական պատասխանատուութենէ վեր չեն դասեր, որոնք ազգային պատկանելիութիւնն ու հաւաքական ինքնութիւնը չեն դրժեր, այլ զանոնք իրենց եռութեամբ կ'ապրին՝ ծառայելով իրենց շըրջապատին եւ նպատակելով անոր յառաջդիմութեան:

ՇԱՂԻՎ Գ. Խ.

Շար.ը՝ էջ 6

ԱՒԱԶԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ. ԶՈՒՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՂԲ

Քաղաքացին վաղուց սորված է հրաշքի սպասել Լիբանանի մէջ:

Ծորակը կը բանայ՝ ջուրի յոյսով:

Անջատիչին կոճակը կը սեղմէ՝ լոյսի բաղձանքով:

Սակայն իւրաքանչիւր անգամ, հրաշքի փոխանքէն, հաշուեցոյց մը (facture) կը ներկայացուի անոր:

Փողոց կ'էլլէ՝ կենսոյրոտային մաքուր միջավայր տեսնելու երազով: Բայց աղբակոյտերը, գարշահոտութիւնը իրմէ առաջ արդէն հասած կ'ըլլան՝ զինք դիմաւորելու:

Շուկայ կը մտնէ՝ գէթ քակի մը «մարսելի» գիներ գտնելու ակնկալութեամբ: Բայց գիները այնքա՛ն բարձր են, որ նախ կը նայի ապրանքին, ապա՝ զգրպանին, ու կը մտածէ՝ արժէ՞ տուեալ ապրանքը գնել, թե՛ գրպանը փրկել...

Պետութիւնը կարծէք մասնագիտացած է քաղաքացիներուն հաշուեցոյց դրկելու արուեստին մէջ: Ծառայութիւնը կրնայ ուշանալ, նուագիլ, անհետանալ կամ ընդհանրապէս միայն թուրքի վրայ գոյութիւն ունենալ, սակայն հաշուեցոյցը հրաշալիօրէն կը գտնէ իր ճանապարհը:

Զուրը այդ պետական հանճարին ամենէն սովորական օրինակներէն մէկն է:

Քաղաքացին իւրաքանչիւր տարի միլիոնաւոր լիբանանեան թղթօսկիներ ջուրի տուրք կը վճարէ պետութեան: Կը վճարէ այն հաստատութեան, որուն պարտականութիւնն է իր տան ծորակին ջուր հասցընել: Քաղաքացին ծորակը կը բանայ եւ կը լսէ... լռութիւն: Զուրը չկայ, բայց հաշուեցոյցը միշտ ներկայ է:

Մինչ այդ փողոցը շրջող ջուրի սիթեռնը կը հասնի ճիշդ ժամանակին:

Զարմանալի՞ երկիր:

Պետական ջուրը ճանապարհը կորսնցուցած է, իսկ վաճառականին ջուրը անգիր գիտէ բոլորին հասցէն:



Սիթեռնի տերը ջուր կը հայթայթէ ամրան, ծմրան, երաշտին, տաքին, ճգնաժամին եւ յաճախ նաեւ այն օրերուն, երբ ամբողջ թաղամասը պետական ջուրի կայթիլ մը կը փնտռէ: Բնականաբար մարդ կը սկսի մտածել՝ Լիբանանի ջուրն ալ երկակի քաղաքացիութիւն ունենալու է. պետութեան համար միշտ սակաւ է, իսկ վաճառականին համար՝ զարմանալիօրէն առատ:

Քաղաքացին ալ երկու անգամ կը վճարէ նոյն իրաւունքին դիմաց: Նախ՝ պետութեան: Ապա՝ մասնաւոր մատակարարին:

Նոյն ծառայութիւնը երկու անգամ վաճառելը տընտեսական նորարարութեան բարձրագոյն ձեռքբերումներէն մէկն է լիբանանեան համակարգին մէջ: Ելեկրականութեան պարագան աւելի կատարելագործուած օրինակ մըն է: Երկու տեսակ ելեկտրականութիւն գոյութիւն ունի Լիբանանի մէջ. պետականը, որ ժամերով կը բացակայի, եւ մասնաւորը, որ հրաշալիօրէն երբեք չի բացակայիր, եթէ պատրաստ ըլլաք անոր ներկայութեան գինը վճարելու: Դոս ալ, հարցը հոսանքին ընդհատումը չէ, այլ՝ ո՞վ պիտի վճարէ անոր բացակայութեան գինը:

Պետութիւնը օրական քանի մը ժամ լոյս կը շնորհէ քաղաքացիին: Կարծէք ելեկտրականութիւնը ժամավարձով աշխատէ: Երբ պետական ելեկտրականութիւնը կը վերադառնայ, գրեթէ տօնական մթնոլորտ կը ստեղծուի տան մէջ:

«Եկա՛ւ»:

Լիբանանցին շատ լաւ գիտէ, թէ ի՞նչ կը նշանակէ այդ մէկ բառը:

Եկաւ լոյսը: Եկաւ ջուրը:

Եկաւ այն, որ ընդհանրապէս կարիք չունի «գալու» բնականօրէն պետութեան մը պարագային:

Մնացեալ ժամներուն բեմ կը բարձրանայ ելեկտրաշարժիչի տերը:

Ան փողրկ կայսրութիւն մը ստեղծած է՝ իր կառններով, իր սակագոյցով, իր հաշիւներով եւ, ամենէն կարեւորը, իր յաճախողներով: Օր մը եթէ որոշէ, կրնայ սակը բարձրացնել, յաւելեալ ժամ հաշուել կամ նոր պատճառ մը գտնել քաղաքացիին գրպանը թեթեւցնելու: Այս փողրկ «իշխանութիւնը» այնպիսի ինքնավարտահոլութեամբ կը գործէ, որ պետական հաստատութիւնը իսկապէս համեստ դիտորդի կը վերածուի անոր ըով: Քաղաքացին ամսական կը վճարէ: Գինը կը բարձրանայ, կը վճարէ: Սակացոյցը կը փոխուի, կը վճարէ: Բացատրութիւնը անհասկնալի կ'ըլլայ, դարձեալ կը վճարէ:

Բայց այստեղ նուրբ, սակայն էական հարց մը կը



յառաջանայ, հարց մը, որ պետութիւնը տարիներէ ի վեր կարծէք կը նախընտրէ անտեսել: Եթէ ելեկտրաշարժիչներու տերերը օրական դրութեամբ վառելանիւթ կը հայթայթեն իրենց «լուսաւորիչ»-ներուն, ինչո՞ւ պետութիւնը կը հանդուրժէ, որ իր թերացած պարտականութիւնը շահոյթի աղբիւր դառնայ ուրիշներուն:

Ալի Պապայի քարայրներ կը գործեն ելեկտրականութեան համակարգէն ներս... Ահա իրականութիւնը:

Սկզբունքները կրնան ճառերը լուսաւորել, բայց մուգ սենեակը՝ ոչ:

Ելեկտրականութիւնը արտակարգ շքեղութիւն մը դարձած է Լիբանանի մէջ, միջոցաւ քսանմէկերորդ դարուն սովորական ծառայութիւն մըն է աշխարհի մեծ մասին համար:

Ապա կու գայ աղբը:

Բազմաթիւ երկիրներ շահաւետ հումք կը գնահատեն աղբը՝ վերամշակում, ուժանիւթ, նոր արտադրութիւն, տնտեսական արժեք:

Աղբը վաղուց ուրիշ արժեք ստացած է Լիբանանի մէջ:

Քաղաքական արժեք: Աղբը կը մնայ աղբ, բայց անոր շուրջ շրջանառուող գումարները շատ մաքուր ճամբաներ կը գտնեն որոշ գրպաններ հասնելու համար:

Մեր երկրին ամենէն «արդիւնաւետ» վերամշակման ծրագիրը հանրային դրամը մասնաւոր հարստութեան վերածելն է:

Կաշառակերութեան մշակոյթը տարիներու փորձառութեամբ այնքա՛ն կատարելագործուած է, որ փտածութիւնն ալ կարգապահ համայնարգի մը վերածուած է, ամեն ինչ՝ իր կարգով, իր չափով եւ իր գինով...

Սպառողական շուկան նոյնպէս ունի սանձարձակութիւններու առանձնաշատուկ գերիշխանութիւն: Ապրանք մը սակ մը ունի վաճառատան մը մէջ, դրացի խանութին մէջ՝ այլ:

Նոյն ապրանքը կրնայ երրորդ սակով ներկայանալ վաղը: Այսպէս, շուկային մէջ ապրանքը ունի սակ մը, իսկ այդ սակը՝ իր սեփական օրէնքը:

Պետական իսկողութիւնը յաճախ մամլոյ հաղորդագրութեան տեսքով կ'ազդարարէ՝ «Գիտցէք, որ դէռ կենդանի եմ...»:

Պատասխանատուները կը յայտարարեն, քննիչ յանձնախումբերը կը խմբուին, նախարարութիւնները կը զգուշացնեն, հեռաւեպիները կը նկարահանեն... Շուկան այդ բոլորին հանդէպ սովորական անտարբերութեամբ կը շարունակէ իր ընթացքը:

Լիբանան տնտեսական կրշակաւանի մը վերածուած է, ուր իւրաքանչիւր քաղաքական խմբաւորում կառուցած է սեփական իշխանութիւնը: Այստեղ կըրնամ անվարան հաստատել՝ հայ համայնքը հեռու կը մնայ բաժնեկցութեան այս համակարգէն:

Մէկուն բաժինը ջուրն է: Միւսինը՝ ելեկտրականութիւնը: Երրորդինը՝ աղբը: Չորրորդինը՝ տնտեսական համաձայնութիւններու մենաշնորհը: Դիւզերորդինը՝ պետական պաշտօնները: Վեցերորդինը՝ մաքսային կամ վարչական անցքերը:

Իսկ քաղաքացիին բաժինը՝ վճարել: Այս ամբողջ համակարգը կ'ապրի աւատապետական տրամաբանութեամբ՝ իւրաքանչիւրին իր բաժինը, իսկ քաղաքացիին՝ վճարելու պարտականութիւնը:

Պետութիւնը վաղուց վերածուած է մեծ սեղանի մը, որուն շուրջ սեփական աթոռներու վրայ բազմած են համայնքային եւ քաղաքական մեծամեծերը: Իւրաքանչիւրը համայնքին անուան տակ ծուարած՝ իր բաժինը կը պաշտպանէ, իր մարդիկը կը տեղաւորէ, իր ազդեցութեան տարածքը կ'ընդլայնէ եւ համայնքային իրաւունք կը ներկայացնէ հանրային հարցստութենէն իւրացուած բաժինը:

Թալանը շատ յաճախ կը հազնի համայնքային արժանապատուութեան զգեստ:

Երբ հանրային հաստատութեան մէջ պաշտօն մը կռուախնձոր կը դառնայ, երբ պետական լիազօրութիւն «հաւատարիմներ» պարգետատրելու միջոց կը վերածուի, երբ օրէնքը երկակի արագութեամբ կը գործէ ատենաներու առջեւ, փտածութիւնը կը դառնայ պետութեան «շփացած գաւաթ»:

Սիւսալի՞ մեր իսկական ողբերգութիւնը: Փտածութիւնը մեր առօրեայ կեանքին անբաժան մասնիկը դարձած է Լիբանանի մէջ:

ԱՅՐՈՆ ՇԻՐՏԵՍԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ԱՊՐՈՒԱԾ ՕՐԵՐ

Բ. ՄԵԾ ՀՕՐՍ ՄԵԾ ՀԻՆ ՌԱՏԻՈՆ

Ընթերցողին: «Ապրուած օրեր» անու-
նը նոր չէ: 1948-ին Նոյն
անունով լոյս տեսած Է Ար-
մէն Գարոյի գիրքը: Այս
գրութիւնները անոր շա-
րունակութիւնը չեն, այլ՝
ուրիշ ժամանակի ու սե-
րունդի ապրուած օրեր:
Տարիներու ընթացքին
կուտակուած այս յուշերը
իմ կեանքիս պատառիկ-
ներն են, բայց նաեւ՝ մեր
հաւաքական հայկական
կեանքէն համեստ մաս մը:
Անոնց մէջ կան օսմանա-
հայ ընտանիքիս համն ու
հոտը, սփիւռքեան ու հա-
յաստանեան իրականու-
թիւնները, հինը՝ նորին
կողքին: Այս ամառ որոշեցի
սկսիլ գրի առնել զանոնք:
Յուսամ՝ անոնց մէջ դուք ալ
ձեզմէ բան մը գտնեք:

Տասը տարեկան էի: Երբեմն մեծ հօրս քիւրտ գոր-
ծաւորներէն մէկը քաղաքի ճեմարանէն զիս կ'առնէր
ու կը տանէր իր եւ **օրթախին** (խոսքով Շամկեանին)
գորգի խանութը՝ Պէյրուֆի
սուլքերուն (շուկայ, խմբ.) մէջ,
Ալենայի փողոց:

Այդ օրերը ինծի համար
փոքր արձակուրդի մը պէս
էին: Դպրոցական ամբողջ
կէսօրէ ետք մը կը կորսուէր,
բայց փոխարէնը մեծ հօրս
աշխարհը կը մտնէր:

Կեսօրուան մօտ մեծ
հայրս գործաւորներէն մէկը
կը դրկէր անկիւնի մասվա-
ճառին: Թարմ քաշուած միս
պիտի բերէր: Յետոյ՝ գետ-
նախնձոր, լոլիկ ու տխի:
Ամեն ինչ կը դրուէր մեծ ափ-
սի մը մէջ եւ կը դրկուէր թա-
ղին փուռը՝ եփելու:

Երբ կերակուրը վերա-
դառնար, սեղանի պէտք
չկար: Գետինը ծալապատիկ
կը նստէինք եւ ձեռքով կ'ու-
տէինք: Ինծի համար այդ
ճաշը (քաշուած միսով գետ-
նախնձոր եւ վրան լոլիկ) աշ-
խարհի լաւագոյն ճաշերէն
մէկն էր:

Ճաշէն ետք քանի մը գորգ
կը փռէինք ու անոնց վրայ
օխ օխ կը քնանայինք: Երբ
կ'արթննայինք, փողոցէն եր-
բեմն **սուս** ծախսող մարդը
կ'անցնէր: Ամէն մէկուս պաղ **սուս** մը կ'առնէինք:
Ախ, ի՞նչ անուշ պաղ պաղ կ'իջնէր:

Տասը տարեկան տղու մը համար կեանքը շատ
աւելի բարդ չէր: Դպրոցական կէս օր մը փախցու-
ցած էի, լաւ կերած, գորգերու վրայ քնացած եւ **սուս**
խմած: Մեծ հօրս հետ օր մը անցուցած էի:

Երեկոյեան միասին իրենց տունը կ'երթայինք,
ճըմմէյգէ, Նոյն փողոցին վրայ, ուր կը գտնուէր հին
Պէյրուֆի Նշանաւոր Քահուլէթ Իզազ սրճարանը, կա-
թողիկէ Ֆրերներուն դպրոցին
մօտ՝ Լիպարիտեաններուն դիմա-
ցոյ:

Շատ կը սիրէի մեծ հօրս ու մեծ
մօրս տունը քնանալ: Ամէն ինչ հին
էր հոն: Զին տեսք ուներ, հին հոտ
ուներ: Իսկ ամէնէն շատ կը յիշեմ
մեծ հօրս մեծ հին ռատիօն, իր մեծ
լարումի կոճակներով:

Առաւօտեան ծամը վեցին ան-
պայման կ'արթննայի: Մեծ հայրս
արդէն արթուն կ'ըլլար: Սեւ սուր-
ճը ամօքնը՝ ռատիօյէն լուրերը կը
լսէր: Միջին Արեւելքի լուրերը հա-
զուադեպ էին ուրախ: Կը լսէր, կը
բարկանար, երբեմն ալ բարձրա-
ձայն կը հայհոյէր:

Առաւօտ մը ես ալ չկրցայ քնա-
նալ ու լեյա: Իր սուրճէն քիչ մը լե-
ցուց ինծի, վրան տաք կաթ աւել-
ցուց եւ սկսաւ պատմել:

Պատմեց Ուրֆայի մասին: Իր
ընտանիքին մասին, թէ ինչպէ՛ս
ինքզինք Սուրիա գտած էր: Ես այն
ատեն չէի կրնար ամբողջութեամբ
հասկնալ պատմածը: Չէի հասկը-
նար նաեւ, թէ դիմացս նստած
մարդուն ընտանիքին գրեթէ ամ-
բողջ տոհմը զոհուած էր 1915-ի
Ուրֆայի հեղուկամարտին:

Պատմեց՝ ինչպէ՛ս 1918-ի մար-
տին վաթսուն հոգիներ զինուած խումբ մը, ընդամե-
նը երեք ուղտերով, Դամասկոսէն ճամբայ ելաւ դէպի
Ազապա՝ Շերիֆ Ալիի միջնորդութեամբ: Խումբին մէջ
էին Արամ Սահակեանը, մեծ հայրս եւ բազմաթիւ ու-
րիշ վերապրող ուրֆացիներ: Անոնք կը փորձէին
կապ հաստատել արտասահմանի հայութեան հետ
եւ ապա հասնիլ ու միանալ Կովկասի հայկական ու-
ժերուն:

Դաժման անապատային երկար ճանապարհին,
Ազապայի մօտ, հանդիպեցան արաբական աղքա-
տամբութեան զինեալներուն, որոնք զիրենք ընդունե-
ցին եւ ապաստան տուին: Այդ գիշեր մեծ հայրս քա-



Նկարին մէջ մեծ հայրս՝ Արթինը, գետինը աշէն երկրորդը,
գլուխը արաբական **քեֆիեով** փաթթուած, մարտ 1918-ին Դամասկոսէն
Ազապա ճամբուն վրայ, իր կամաւորական ջոկատին հետ:

Նի մը զինակից ուրֆացիներու եւ արաբներու հետ
վրանի մը տակ մնաց: Վրանին մէջ եղողներէն մէկը,
սակայն, տարբեր էր միւսներէն:

Մեծ հայրս սուրճը **ֆսֆը-
ասցնելով**՝ կամաց կամաց կը
խմէր եւ կը պատմէր.

«**Զեօփէկը** (շան լալոտ
խմբ.) կապոյտ աչքեր ուներ,
գլխուն **քեֆիէն** ալ սպիտակ
էր. **Տապանչաս** (ատրճա-
նակ, խմբ.) գլխուս տակը
պահելով՝ հազիւ երկու ժամ
քնացայ»:

Այդ կապուտաչեայ, սպի-
տակ **քեֆիեով** մարդը Լո-
րանս Արաբիացին էր: Երե-
ւակայել անգամ չէի կրնար,
որ ճըմմէյգէի այդ հին տան
մէջ, մեծ հօրս սեւ սուրճին
քով նստած, կը լսէի պատ-
մութիւն մը, որուն մէկ ծայրը
Ուրֆան էր, իսկ միւրը՝ արա-
բական ապստամբութեան
ամէնէն առասպելական դեմ-
քերէն մէկը:

Ուրֆացի կամաւորները ի
վերջոյ հասան Ազապա,
ապա անցան Փոր Սայիտ:
Հոն կապ հաստատեցին Գա-
հիրէի Ազգային միութեան եւ
ՀՅԴ Եգիպտոսի Կեդրոնա-
կան կոմիտէին հետ՝ տեղե-
կութիւն ստանալով արտա-
սահմանի հայութեան մասին:
Ապա որոշեցին Կիպրոս անց-
նիլ եւ միացան հոն կազմուող

Հայկական լեգէոնին, ուր Ուրֆացի կամաւորներուն
թիւը հետագային հասաւ շուրջ 150-ի:

Տարիներ ետք միայն սկսայ հասկնալ այդ առաւօ-
տեան պատմութեան ծանրութիւնը: Ինծի համար ան
պարզապէս մեծ հայրս էր՝ գորգի վաճառականը, որ
համով ուտելիք կը սիրէր, սեւ սուրճ կը խմէր եւ
առաւօտ կանուխ լուրերուն վրայ կը **քիւֆրէր** (հայհո-
յել, խմբ.): Խմիչքն ալ շատ կը սիրէր: Առաւօտ կը խմէր:
Կը զուարթանար, կը խնդար, ապա կ'երթար անուշ
քնանալու: Իր սերունդի շատ մը
վերապրողներուն պէս, կարծես
խմիչքն ալ կեանքը շարունակելու
ձեռքէն մէկն էր: Բայց այդ սովո-
րական կեանքին ետին ուրիշ
կեանք մը կար: Ուրֆա կար: Կո-
րուստ կար: Անապատ կար: Եւ վե-
րապրում կար:

Յարութիւն Արզուհայլճեան
Ուրֆայի մէջ կորսնցուց գրեթէ իր
ամբողջ տոհմը: Բայց կեանքը շա-
րունակեց: Ընտանիք կազմեց, ու-
նեցաւ չորս զաւակ, տասներեք
թոռ եւ քսաներեք թոռնորդի: Թե-
րեւս այդ էր իր մեծագոյն յաղթա-
նակը՝ կեանքը շարունակել այն-
տեղ, ուր ուրիշներ փորձած էին
վերջ տալ անոր:

Վերապրող ուրֆացիները չկըր-
ցան իրենց նահատակներուն
աճիւնները արժանաբար թաղել:
Փոխարէնը՝ անոնց յիշատակը
տարին իրենց հետ՝ Դամասկոս,
Հալէպ, Ազապա, Կիպրոս, Պեյ-
րուս, Իրաք, Եւրոպաներ ու Ամերի-
կաներ: Եւ ի վերջոյ փոխանցեցին
մեզի՝ սերունդէ սերունդ:

Ես այդ յիշատակէն իմ բաժինս
ստացայ շատ պարզ առաւօտ մը,
ճըմմէյգէի հին տան մէջ: Տասը
տարեկան էի: Մեծ հայրս դիմացս նստած էր: Մեծ
հին ռատիօն կը խօսէր: Ինչ սեւ սուրճը կը **ֆսֆսաց-**
նէր, իմինիս մէջ ալ քիչ մը տաք կաթ լեցուցած էր:

Այն ատեն չէի գիտեր, որ օր մը մեծ հայրս պիտի
չըլլար: Տուը պիտի չըլլար: Այդ մեծ հին ռատիօն ալ
պիտի չըլլար: Բայց պատմութիւնը պիտի մնար:

Ու ամէն անգամ որ զայն կը յիշեմ, պահ մը նորէն
տաքը տարեկան կ'ըլլամ՝ ճըմմէյգէի այդ հին տան
մէջ, մեծ հօրս քով ծալապատիկ նստած:

Ե՛լ վալլա՛հ, մեծ հայրիկ:

ԲԱՅՅԻ ԱՐՏԱԼՃԵԱՆ

Այս յօդուածաշարքին նախորդ գրութիւնը Ա. Կելիպոլի Տուն
թիւ 54 <https://www.aztagdaily.com/archives/702461>

ԱՆԿՐԿՆԵԼԻ ՀՍԵՒՊԸ

ԱՆԾԱՆՕԹ
ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ



Սուրիահայ գաղութի ծաղկումը
մնայուն նպատակը եղած է այդ երկրի
ջուրը խմած եւ օդը շնչած բոլոր հայոր-
դիներուն:

Նորահաս սերունդները, որոնք կը
վայելեն մեր ակումբներն ու բանակա-
վայրերը, ընդհանրապէս ծանօթ չեն,
թէ ի՞նչ ի՞նչ զոհողութիւններով մեր
միութիւնները սեփականատէր եղած
են այդ անշարժ գոյքերուն:

Դիմատետրի վրայ տեղադրուած էր
Սուրիոյ երիտասարդական միութեան
բանակումէն համայնապատկեր մը՝
Քեսապ, Եքիզուրքի բարձունքին,
Աճափ շրջանը, ՅՄԸՄ-ի բանակա-
վայրէն ներս:

Յիշողութիւնս տեղադր մը կատա-
րեց ուղիղ յիսունվեց տարիներ, աշնա-
նային կիրակիի մը երեկոյեան:

Քեսապի մեր տան դուռը միշտ բաց
էր փաստաբան հօրս խորհուրդին դի-
մողներուն, յատկապէս՝ ազգային եւ
միութեանական հարցերու շուրջ:

ՀՄԸՄ-ական երկու վաստակաշատ
երեք խմբապետներ՝ Խորէն Նազար-
եանը եւ Ալեքսան Իսկէնտերեանը,
Եքիզուրքի ամբարանոցի բնակիչներ,
շրջանին մէջ բանակավայրի հողա-
շերտ մը գնելու հարցով դիմեցին հօրս
խորհուրդին:

Բանակավայրի գնման այս ընթաց-
քը յաջողեցաւ՝ երկու երեք սկաւուտ եղ-
բայրներու խոհեմութեամբ եւ գործա-
կան քայլով:

Եքիզուրքի ընկեր Աբուն ստանձ-
նած էր նոր բանակավայրը կարգաւո-
րելու պարտականութիւնը:

Յաջորդ ամրան արդէն տարածքը
մացառներէ եւ թուփերէ մաքրուած,
հողը հարթուած դաշտ մըն էր: Արեւ-
մտեան կողմը հրաշքի համագօր՝ ցամ-
քած աղբիւր մը բխած էր: Այդ տարի
ջուր կրելու պարտականութիւն չունե-
ցանք, տակաւին ենթակառոյց չկար,
էլեկտրական շարժակ մը միայն, որուն
լամբերը աւանդական լապտերներու
փոխան՝ կը լուսաւորէին մեր վրաննե-
րը:

Տարիներու ընթացքին բանակա-
վայրը ցանկապատկուեցաւ, օժտուե-
ցաւ սրահով, խոհանոցով, լուացա-
րաններով եւ սենեակներով:

Անցնող կես դարուն ամրան եղա-
նակին բազմաթիւ սերունդներ՝ Սու-
րիոյ տարբեր քաղաքներու ՀՄԸՄ-ի
սկաւուտական խումբերը, մարզիկնե-
րը, պատանեկան ու երիտասարդա-
կան միութիւնները, մինչեւ արեւածագ
արթուն պահակներով, խարուկահա-
նդներուն կրակին շուրջ հաւաքուած



Թուականը 1970 էր, այդ օրերու իշ-
խանութիւնը ձախակողմեան հակում-
ներով ուներ երկրի տնտեսութիւնը՝
քայքայուած, անշարժ գոյքերու սակե-
րը՝ անկումի մէջ:

Հողաշերտին սեփականատէրը ար-
տասահմանէն եկած էր ու նպաստա-
ւոր գին մը կ'առաջարկէր:

Գնող կողմի երկու ՀՄԸՄ-ական եղ-
բայրները օրինական միջոցներու մա-
սին լուսաբանուելէ ետք, կը մտածէին
ժողովի տանիլ այս հարցը, ապա յա-
ջորդ շաբաթավերջին ներկայանալ
համաձայնագիրը ստորագրելու եւ
գումարը վճարելու համար:

Հայրս՝ փաստաբանի եւ ազգային
կեանքի փորձառութենէն մեկնած, թե-
լադրեց «Երկաթը տաք տաք ծեծել»,
տեղւոյն վրայ կանխավճար մը տալ եւ
համաձայնագիրը ստորագրել՝ դիտել
տալով, թէ մինչեւ յաջորդ շաբաթ կըր-
նան ախորժակներ բացուիլ, յատկա-
պէս՝ ժողովի օրակարգի նիւթ ըլլալէն
ետք:

Եղբ. Խորէն եւ եղբ. Ալեքսան իրենք
ալ այս խորհուրդին համաձայնելով՝
գործնական գտնուեցան, կանխավճ-
ար գումարը ապահովեցին, հողափո-
րոջ հետ վերադարձան եւ համաձայ-
նագրի ստորագրեցին:

Կը յիշեմ հողաշերտին գինը, այդ
օրերուն մէկ քիւլոկրամ ոսկիի համար-
ժէք էր:

Ծնողներով եւ համակիրներով այստեղ
հայաշունչ դաստիարակութիւն ստա-
ցաւ՝ բանակավայրի հողաշերտը վե-
րածելով պատառ մը հայրենի հողի,
ուր միշտ կը ծածանէր տարագիր,
ապա հայոց պետականութեան
խորհրդանիշ եռագոյնը:

Սփիւռքի իւրաքանչիւր կառոյց՝
եկեղեցի, դպրոց, ակումբ, բարեփոխա-
կան միութիւն, դարմանատուն, բանա-
կավայր կամ խաղավայր, ունի իր
պատմութիւնը, անոնք հայապահպան-
ման ամրոցներ են, որոնք կը ծառայեն
գաղութահայ կեանքի բարգաւաճման:
ՀՄԸՄ-ի բանակավայրի պատմու-
թիւնը կը սկսի երկու երեք միութեանա-
կաններ Խորէնի եւ Ալեքսանի տեսիլ-
քէն ծնունդ առած նախաձեռնութիւ-
նով, ապա՝ իրերայաջորդ վարչութիւն-
ներու եւ խորհուրդներու հետեւողա-
կան աշխատանքով, ներկայանալի
բանակավայր մը պահելու մնայուն
օրակարգով:

Գաղութահայ կեանքը կանգուն
պահելու ազգակները բազմաթիւ են,
ուր միշտ ներկայ են «Անձանօթ գին-
ուր»-ները ու իրենց օրինակը կը փո-
խանցեն սերունդէ սերունդ:

ՍԱՌԻԿ ԷՊԼԻԴԱԹԵԱՆ

Շղնէ

ՍՓԻՒՌԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐՈՒ ԼՈՒԾՄԱՆ ՄԷՋ. ՈՐՆ Է ՍՓԻՒՌԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Սփիւռքի զօրաշարժի խորհրդածողովին (Փա-րիզ, ապրիլ 11-12) ընթաց-քին տեղի ունեցած չորս կլոր սեղաններու ընկա-րկումներուն ամփոփումը յառաջիկայ մեր թիւերով կը ներկայացնենք մեր ըն-թերցողներուն: Այս համա-ռօտագիրները կ'անդա-դառնան՝ սփիւռքի դերա-կատարութեան, ազգային ինքնութեան, Հայաստան-սփիւռք յարաբերութիւն-ներուն եւ համազգային կազմակերպման հիմնա-կան մարտահրաւերներուն ու հեռանկարներուն: **Անոնք միայն ընկարկումներու արձանագրութիւն-ներ չեն, այլ նաեւ փորձ մը՝ համակարգելու սփիւռ-քի առջեւ ծառայած հիմնական խնդիրները եւ նա-խանշելու ապագայի ռազմավարական, քաղաքա-կան, կրթական ու կազմակերպչական ուղենիշները: Ընկարկումներուն մէջ հնչած գաղափարներն ու առաջարկները կոչուած են նպաստելու համահայ-կական ընկարկումին, երկխօսութեան եւ նոր նա-խաձեռնութիւններու ձեւաւորման:**

Խորհրդածողովին եւ կլոր սեղաններու մասնա-կիցներուն ու ընկարկուած նիւթերուն մասին յաւելե-ալ տեղեկութիւններ կարելի է գտնել խորհրդածո-ղովի պաշտօնական կայքէջին մէջ [https://spyurkcon-ference.org/hy/](https://spyurkconference.org/hy/):



պուած հարցեր՝ սփիւռքի հաւաքական քաղաքա-կան կամքի դրսեւորման միջոցի՝ գործիքի ստեղծու-մը եւ հաւաքական քաղաքական կամքի ներդրումը Հայաստանի Հանրապետութեան քաղաքական օրակարգին մէջ: Այս նպատակները կարելի է իրա-կանացել ընտրութիւններով եւ կամ համախմբումի տարբեր միջոցներով, որոնց շուրջ անհրաժեշտ է համասփիւռքեան եւ համահայկական ընկարկում-ներու ձեռնարկել: Բոլոր հնարաւորութիւնները եւ հաւանական խոչընդոտները նկատի ունենալով՝ սփիւռքը ի՞նք պիտի որոշէ իր քաղաքական օրա-կարգի թիրախները, ուղղութիւնն ու քայլերը:

ՀՀ հասարակութիւնը յոգնած, բարոյալքուած եւ հիասթափուած է: 1990-ական թուականներու պայ-քարելու կամքը գոյութիւն չունի այսօր: Հայկական իրականութիւնը այսօր տարբեր է, քան եր ընդամե-նը 6-7 տարի առաջ, երբ կար համազգային օրա-կարգ, եւ կար այդ օրակարգը հետապնդող «եռա-կարկներ» (Հայաստանի Հանրապետութիւն, Արցախի Հանրապետութիւն եւ սփիւռք): Այսօր այդ նոյն համազգային օրակարգի հարցերը հետապն-դող մէկ հիմնական դերակատար կայ՝ սփիւռքը: Արցախեան իշխանութիւնները չունին այն միջոցնե-րը եւ կարողութիւնները, որ ժամանակին ունէին, իսկ երրորդ դերակատարը՝ Հայաստանի Հանրա-պետութիւնը, յանձնա իր իշխանութիւններուն, այ-լեւս ոչ միայն չի զբաղիր Արցախի եւ Ցեղասպանու-թեան հարցերով, այլ հակառակը կ'ընէ՝ փորձելով արգիլել եւ կամ առնուազն խոչընդոտել, որ միւս դե-րակատարներն ալ այդ ուղղութիւններով աշխա-տանք տանին:

Հետեւեալը համազգային օրակարգի հարցերու բարձրաձայնումի եւ պաշտպանութեան գործը մեծ բաժինով մնացած է սփիւռքի պատասխանատուու-թեան: Ցատկապէս Արցախի հարցերը, 2020-ի 44-օ-րեայ պատերազմէն, Ազրպէյճանի ցեղասպանա-կան քաղաքականութենէն եւ 2023-ին Արցախի ամ-բողջական հայաթափումէն ետք, աւելի բազմազան դարձած են՝ ներառելով բռնի տեղահանութեան ժողո-վուրդի եւ գերիներու իրաւունքներու պաշտպանու-թիւնը, միկսէ Արցախի պատմամշակութային ժա-ռանգութեան պահպանումը: Միւս կողմէ՝ հայկա-կան հնագոյն հաստատութեան՝ Հայ առաքելական եկեղեցւոյ դէմ արշաւը չի տեղաւորուիր որեւէ ազ-գային օրակարգի մէջ, ինչ որ ՀԱԵ-ին պաշտպանու-թիւնը այդ արշաւէն դարձած է համազգային օրա-կարգ:

Սփիւռքը, իր տարբեր կառոյցներով եւ անհատ ազդեցիկ անձնաւորութիւններու հնարաւորութիւն-ներով, կարողութիւն ունի վեց ցամաքամասերու վրայ պաշտպանելու հայկական շահերը, պահպա-նելու մեր ժառանգութիւնը եւ յառաջ մղելու հայկա-կան իղձերը: Այդ ներուժը կրնայ լրացնել պետական մակարդակի դիւանագիտութեան կառուցողական տարրերը՝ միաժամանակ բարձրացնելով հայկա-կան հարցերը, բանաձեւելով, բարձրաձայնելով եւ պաշտպանելով հայութեան իրաւունքներն ու ընդ-լայնելով Հայաստանի Հանրապետութեան հնարա-ւորութիւններու դաշտը այնպիսի ձեւերով, որոնք պետական դիւանագիտութեան կարողութիւններէն տարբեր են: Գոյատեւելու համար համահայկական աշխարհը պետք է գործէ որպէս իր սեփական ճա-կատագրին ինքնիշխան տերը, զարգացող հայրե-նիք մը՝ զօրակցող սփիւռքով մը, որ ինքնին աշխար-հաքաղաքական ուժ է:

Հայ սփիւռքը, որոշ առումներով, այսօր աշխար-հաքաղաքական ինքնուրոյն ուժ է՝ աւելի ազդեցիկ, քան՝ շատ մը երկիրներու կառավարութիւններ: Սփիւռքը կը գործէ համաշխարհային իրակաւնու-թե-ան մը, միջազգային այնպիսի մրցապայքարի մը մէջ, որ կը ընտրողուի պետութիւններու եւ անդրազ-գային ցանցերու միջեւ սուր բախումներով: Այս իրավիճակին մէջ սփիւռքի քաղաքական օրակարգի ուղղութիւններէն մէկը հայկական պետութեան անվտանգութիւնը եւ գոյատեւումը ապահովելու միտումն աշխատանքներուն աջակցութիւնն է:

Սփիւռքի ներուժը մեծցնելով, այդ ներուժը հա-մազգային օրակարգին ծառայեցնելը կ'ենթադրէ նաեւ այնպիսի նախաձեռնութիւններ, որոնք թէեւ իրենց ձեւով ոչ քաղաքական են, բայց եւրօթամբ քաղաքական են: Նման նախաձեռնութիւններու մաս կը կազմէն սփիւռքի հնարաւորութիւններու վի-ճակագրումը, համաշխարհային տարբեր՝ վերու-ծական, հասարակական, արհեստագիտական, տե-ղեկատուական հարթակներու մէջ հայ տարրի ներ-կայութիւնն ու ազդեցութեան մեծացումը, հայկա-կան պատմական եւ մշակութային կեդրոններու պահպանումը եւ նորերու ձեւաւորումը, միջհամայն-քային կապերու զարգացումը եւ համագործակցու-թեան ձեւաւորումը, վտանգուած հայ համայնքնե-րու պաշտպանութիւնը եւ պահպանումը:

ԱՐՑԱԽԻՑ ՅԵՏՈՅ, ԹԷԿՈՒԶ ԶՐՀԵՂԵ՞Ղ...



Թող ոչ ոքի համար տարօրինակ չթուայ, որ հայկական Արցախի կործու-տից յետոյ սպասելի էր ողջ տարա-ծաշրջանի ինչպէս եւ միջազգային աշխարհաքաղաքական **սթաթիս** **քուռ** փոխուելու էր ըստ ներկայիս անկաստ ու սպառնալից իրավիճա-կի: Փաստօրէն այդ կորուստը ոչ միայն ծանրագոյն ու ճակատագրա-կան վնաս է պատճառել մեզ՝ աշխար-հասփիւռ հայութեանն ու Հայաստանի պետականութեանը, այլեւ անմիջա-կանօրէն ներուժ ու ներգործուն սպառնալիքների դուռ է բացել հարե-ան ԻԻՀ-ի ու կրկնակիօրէն Կովկասի աւանդական «տեր ու տիրական» Ռու-սաստանի համար՝ յատկապէս հաշ-ի առնելով վերջինս ուղբանական թըն-ծուկը:

Արդէն պարզից էլ պարզ է, որ «Ար-ցախեան ջրհեղեղից» յետոյ հայն ու Հայաստանն դիմագրաւում են ըստ էութեան գոյաբանական մարտա- հ-րաւերներ՝ հողային-տարածքային եւ հայրենական-պետական համակար-գերի թէ՛ պահպանման եւ թէ՛ կործուս-եան առումներով:

Իսկ այս բոլորի առաջնակարգ երաշխիքներ հանդիսացող երբեմնի մարտունակ բանակի ո՛չ նշոյլներ կան ու ո՛չ էլ երեսցող ապացոյցներ (շքերթ, զօրահանդէս եւ կարելորդ՝ նպատակային-կանխարգելիչ ռազ-մափորձեր), եւ ապա դիւանագիտա-կան գերատեսչութեան գրեթէ զրօ դե-րակատարութիւն՝ սեփական երկրի շահերն ու անվտանգութեան երաշխիք՝ ՀՀ-ի խուսափաւելու հնարաւորութիւն-ները, յատկապէս՝ միջազգային դիւա-նագիտական ասպարեզում: Այս ծան-րակշիռ վնասը Հայաստանի իշխա-նաւորները փորձում են մշտապէս «հատուցել» իրենց «խաղաղասիրա-կան» աճաբարարութիւններով, միկս-դեռ անքննելի օրինաչափութիւն է

այն, որ եթէ խաղաղութիւն ես ուզում, պատրաստ եղիր պատերազմի... Ահաւասիկ, Հայաստանում իշխող «թաւշեայ խաղաղասիրութեան» ար-դիւնքում ունենք այն, ինչ ունենք այ-սօր. ՀՀ-ի աւելի քան 200 քառ. քմ բռն-նագրաւուած տարածք, վտանգուած Սիւնիք, կորստի ենթակայ Տիգրանաշ-էն ու, ըստ շրջանառուող լուրերի, Կա-պանի երկնքում ազրպէյճանական անօդաչուների շուրջօրեայ հետազօ-տական թռիչք-նկարահանումներ... թէ ի՞նչ նպատակով, դա արդէն պարզ է ու մեկին...

Ինչ վերաբերում է Արցախի կործու-տի տարածաշրջանային ազդեցու-թիւններին, պետք է արձանագրել, որ անտարակայն դրանք ենթադրում են հարեւան Իրանի համար խիստ ան-վտանգային սպառնալիքներ, որոնք մասնաւորապէս ի յայտ եկան 2020 թ. արցախեան պատերազմից յետոյ: Նախ տարածուածութեան երկայնքով խիստ կրճատուեց հայ-իրանական անվտանգ ու վստահելի սահմանային շփման գիծը. ապա, եւ որ շատ կարե-ւոր է, հայկական (արցախեան) բռնա-զաւթուած տարածքներում աստիճա-նաբար յայտնուեցին միջազգային ու-ժային կառոյցների ինչպէս ռազմա-քաղաքական միաւորներ, այնպէս էլ՝ տնտեսական եւ հիմնականում նաւ-թակազային ընկերութիւններ: Եւ ար-դէն ամենօրեայ լրատուական հաղոր-դումները ողորդուած էին բռնագրաւ-ւած Արցախում խրալէական զինուո-րական եւ բրիտանական ուժանիթա-յին ներկայութիւնների մասին... Սրանք, սակայն, այսօր համալրուած են «Թրամփի ուղի»-ով՝ ԻԻՀ-ին անմի-ջական սահմանակից ու դրանցից բխող անվտանգային բոլոր սպառնա-լիքներով. ընդորում՝ ներգործուն...


Թէեւ իրաւացի, բայց հարկ չենք համարում մեկ անգամ եւս ընկաղա-տել ժամանակի Ռոհանի-Չարիֆ

ԴԵՐԵՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 6

ԱՐԵՄՏԱՅԱՅԵՐԵՆՈՎ ԶԱՐԳԱՆԱՆՈՒ ՆՈՐ ՎԱՅՐ ՄԸ՝ «ԶԱՐՑԱՆՑ»

Կը մեկնարկենք «Զարցանց»-ը՝ արեւ-մտահայերէնով Նոր առ-ցանց ծրագիր մը, որուն դռները բաց են աշխար-հի չորս ծագելէ մա-նուկներու, պատանիե-րու եւ չափահասներու դիմաց: Հաճելի, ապա-հով եւ ջերմ մթնոլորտի մը մէջ, գաւազան աշ-խատանքներու ընդմե-ջէն արեւմտահայերէնը բոլորին առօրեային մաս պիտի կազմէ: Ծրա-գիրը պիտի սկսի 20 սեպտեմբեր 2026-ին:



«Զարցանց»-էն ներս 3 տարեկանէն սկսեալ բոլոր մանուկները, պատանի-ները եւ չափահասները առիթ պիտի ունենան՝ արեւմտահայերէնով արտա-յայտուելու, յայտնաբերելու, կարդալու, գծելու, գրելու, երգելու, խաղալու եւ այսպէսով բնականօրէն զարգացնելու իրենց լեզուական կարողութիւններն ու փորձառութիւնները: Խմբային աշ-խատանքներու մասնակցելով՝ անոնք շաբաթը 3-5 ժամ պիտի կարենան սու-գուիլ արեւմտահայերէնին մէջ:

«Զարմանազան» ամսանային ծրա-գիրի առցանց փորձառութենէն ծնունդ առած «Զարցանց»-ը առցանց վայր մըն է, ուր լեզուն բնականօրէն կ'ապ-

րի՝ հիմնուած նորարարական մանկա-վարժական ու ընկերային սկզբունքնե-րու վրայ:

Ծրագիրը բաց է թէ՛ սկսնակներուն, թէ՛ արդէն հայերէն խօսողներուն, թէ՛ կարողալ-գրել փափաքողներուն, թէ՛ ալ պարզապէս լեզուն աւելի կիրարկելու առիթներ փնտռողներուն:

«Զարցանց»-ը «Գալուստ Կիւլպէ-կեան» հիմնարկութեան նախաձեռնու-թիւնն է եւ կը կազմակերպուի Լիոնի «Հազար ու մէկ աշխարհ» ընկերակ-ցութեան կողմէ:

Յաւելուի տեղեկութիւնները եւ արձանագրութեան համար կարելի է այցելել zartsants.com կայքէջը:

Դ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ԴՄԸՄ ՊԵՅՐՈՒԹ - ՆԱՍՐ ԶԱՄԵՏ ԼՈՉ

Այսօր յետմիջօրեի ժամը 3:00-ին, Պիամտունի «Ամին Ապտեյ Նուր» մարզադաշտին վրայ, ԴՄԸՄ Պեյրութի ֆութպոլի խումբը, Դ. դասակարգի ախոյեանութեան աւարտական հասգրուանի իր 3-րդ մըրցումին, պիտի մրցի Պեքայի ախոյեան Նասր Զամետ Լոզի դէմ:

ԴՄԸՄ Պեյրութ իր առաջին մրցումին 2-0 արդիւնքով մատնած էր Սաֆա Շուէյֆաթը եւ երկրորդ մըրցումին Ղատիր Զարիսը՝ 3-0 արդիւնքով: Նասր առաջին մրցումին 2-1 արդիւնքով պարտութիւն կրած էր Ղատիր Զարիսէն եւ Նոյն արդիւնքով պարտուած՝ Սաքաֆի Զերիէն:

Անշուշտ այս արդիւնքները իմաստ չունին, եւ միշտ մրցակիցը դժուար կրնայ ըլլալ, եթէ դուն պատրաստ չես, մինչ մրցակիցը տկար կրնայ թուիլ, եթէ դուն խմբային լաւ խաղ կը խաղաս:

Այս տարի ԴՄԸՄ Պեյրութի ուժը խմբային խաղաոճն է, դաշտին կտրոնի պայքարը եւ ճնշումը, ուր մըրցակից մարզիկներ յաճախ ճնշումի տակ ըլլալով կը կորսնցնեն գնդակը՝ առիթ տալով ԴՄԸՄ-ին, որ արագ հակապարծակումներով գրաւէ մրցակիցի բերդը:

Համակիրներէն կ'ակնկալուի, որ ներկայ ըլլան դաշտ՝ քաջալերելու համար տղաքը, որոնք խումբի յաղթանակին պարագային հսկայ քայլ մը առած կ'ըլլան հասնելու Գ. դասակարգ:

Նշենք, որ 2 խումբերէն առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը պիտի բարձրանան Գ. դասակարգ:



Այսօրուան մրցումը ճակատագրական կրնայ ըլլալ, մանաւանդ եթէ Արապի Աքքար եւ Սաքաֆի Զերի կտտեր կորսնցնեն իրենց մրցումներուն:

ԴՄԸՄ-ի երիտասարդներու խումբը (20 տարեկանէն վար) գտումի իր 2-րդ մրցումին 9-0 արդիւնքով ջախջախիչ յաղթանակ մը արձանագրեց Տահր Աի-մար խումբին դէմ:

Կի հանճեան, Վահագն Չարմէնեան (2), Ալեք Նահիւթ, Ճօ Զաշմ (2), Ալի Զամիէ (2) եւ Զրիստ Զալաշ Նշանակեցին ԴՄԸՄ-ի կողերը:

Առաջին մրցումին 2-1 արդիւնքով պարտուելէ ետք Նըժմէթ Սահրայէն, կը մնայ մեր երիտասարդներուն կարելուր մրցում մը՝ Ռասիկի դէմ (այս շաբաթավերջին): Այս մրցումը պիտի վճռէ, թէ ԴՄԸՄ կըրնա՞յ մասնակցիլ Լիբանանի երիտասարդներու ախոյեանութեան մրցումներուն: ԴՄԸՄ-ի ապագայի խումբի մարզիկները անշուշտ պէտք ունին համակիրներուն քաջալերանքին՝ Ռասիկի դէմ մրցումին, որուն մանրամասնութիւնները կը հաղորդենք աւելի ուշ:

«ԷՍ. ԷԼ. ԷՍ.»

- ՄԵՍՍԻ 928-ՐԴ ԿՈԼԸ ՆՇԱՆԱԿԵՑ
- ՍԱՐԱՃԵԱՆ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԿՈԼԸ ՆՇԱՆԱԿԵՑ

«Էմ. Էլ. Էս.»-ի այս տարեշրջանի 25-րդ հանգըրանի մրցումներուն, անցեալ տարուան ախոյեան Ինթեր Մայեմի չկրցաւ մօտենալ առաջին դիրքը գրաւող Նշշվիլի եւ 2-2 արդիւնքով հաւասարութիւն արձանագրեց անոր հետ:

Նշշվիլ բացաւ մրցումին հաշիւը 4-րդ վայրկեանին՝ անգլիացի Սամ Սարիճի շնորհիւ: 19-րդ վայրկեանին Նշշվիլի յետսպապի Ռիտ Պեքըր-Ուիթինկ սխալմամբ իր բերդին մէջ նշանակեց Ինթեր Մայեմիի հաւասարութեան կոլը: 62-րդ վայրկեանին Լիոնել Մեսսի կոլ մը նշանակեց՝ փոխանցում մը ստանալէ ետք իր ազգակից Ռոտրիկօ Տը Փոլէն, բայց 91-րդ վայրկեանին Սարիճ կոլ մը եւս նշանակեց եւ Նշշվիլ հաւասարութիւն մը խլեց Ինթեր Մայեմիի դաշտին վրայ:

Հակառակ յաղթանակ չարձանագրելուն, Մեսսիի համար այս մրցումը կարելուր էր: 39 տարեկան արժանթիւնցի տարեշրջանի իր 19-րդ կոլը նշանակեց՝ գրաւելով կոլ-սքորըրներու դասաւորման պարագլուխի դիրքը, գերազանցելով Տալասի յառաջապահ Փեթթար Մուսային (18 կոլ): Ան իր ասպարեզին 928-րդ կոլը նշանակեց:

Օրլանտօ Սիթի 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Թորոնթօ Ֆ. Բ. խումբը: Ֆրանսացի Անթան Կրիզման իր կատարած 13 մրցումներուն կրցաւ նշանակել իր 8-րդ կոլը:

80-րդ վայրկեանին դաշտ ներկայացաւ պահեստի ամերիկահայ մարզիկ Դարվի Սարաճեան, որ 2 վայր-



կեան ետք նշանակեց Օրլանտոյի 2-րդ կոլը: 96-րդ վայրկեանին Սարաճեան դեր ունէր 3-րդ կոլին նշանակման մէջ: Վերջինս կոլի վերածեց Զոլումպիացի Իվան Տարիօ Անկուլօ, Զորթես: Օրլանտօ իր յաջորդական 3-րդ յաղթանակը արձանագրեց Արեւելեան շրջանի 6-րդ դիրքին վրայ հաստատուելով:

Օրլանտոյի մրցումէն քանի մը ժամ ետք, Նոյն ակումբի Բ. կարգի խումբերը մրցեցան իրար դէմ, եւ Օրլանտօ 3-1 արդիւնքով յաղթեց Թորոնթոյին: Դարվի Սարաճեան դեր ունեցաւ կատարելով Էսիսթ մը եւ նշանակելով իր ակումբի 3-րդ կոլը: Բ. կարգի ախոյեանութեան գծով Սարաճեանի 6-րդ կոլն էր ասիկա, եւ անոնց կողքին ան 6 Էսիսթ ալ կատարած է:

«ՖՈՐՄԱԿԱ 1»

- ԱՆԹՈՆԵԼԼԻ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՄ ՅԱՂԹԱԿԱՆ
- «ԱՆԲԱՆՏ» ՆՈՐԻՍ 3-ՐԴ

Սպանիոյ կրան փրին առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ Մատրիտի մէջ, ուր Նոր շրջավազը՝ «Մատրիտկ» ականատես եղաւ մրցանշային կրան փրիի մը:

Երեք օրերու վրայ 353 հազար հանդիսատեսներ ընդունած շրջավազը սկսաւ, երբ անցեալ տարուան աշխարհի ախոյեան Լանտօ Նորիս սկսաւ առաջին դիրքէն փոխադիշքը շահած ըլլալով: Ամէն ինչ լաւ կ'ընթանար մինչեւ 15-րդ շրջան, երբ «Ասթօն Մարթին»-ի վարորդի Լանս Սթրօլ արկած մը ունեցաւ:

Նորիսի չար բախտէն, ան հազիւ Փիթ-Լէյնի մուտքը անցած էր, երբ պատահեցաւ արկածը, մինչ բոլոր վարորդները մտան իրենց անիւները փոխելու:

Ասելէ օգտուեցաւ 20 տարեկան իտալացի Զիմի Անտրեա Անթօնելլի, որ իր «Մերսետես»-ով կրցաւ առաջին դիրքի վրայ աւարտել մրցումը, մանաւանդ երբ «Ֆեռարի»-ի վարորդ Շարլ Լըքլեր չկրցաւ իր ինքնաշարժին անիւները պահել եւ մրցումի աւարտէն 9 շրջան առաջ ստիպուեցաւ անիւները փոխել՝ առիթ տալով իտալացի վարորդին, որ գրաւէ առաջին դիրքը, եւ ըստ երեւոյթին դժուար պիտի ըլլայ անոր հասնիլը, մանաւանդ որ 81 կէտերու առաւելութիւն ունեցաւ իր ամէնէն մօտ մրցակիցին վրայ:

4 անգամ աշխարհի ախոյեան Մաքս Վերշթափեն կրցաւ 2-րդ դիրքը գրաւել իր «Ռետ Պոլ»-ով, մինչ Նորիս աւարտեց 3-րդ դիրքին վրայ:

Անթօնելլի, որ շաբաթ մը առաջ Իտալիոյ մէջ 19-րդ դիրքէն սկսելով շահած էր, մրցումէն ետք ընդունեց, թէ Նորիս անբախտ էր, եւ ինք բախտի բերմամբ Է, որ շահած էր այս կրան փրին:

«Ֆեռարի»-ի միւս վարորդը՝ Լուիս Զամիլըն, 7-րդ շրջանին ստիպուեցաւ կիսատ լքել կրան փրին, այս տարեշրջանին առաջին անգամ ձախողելով կէ-



տեր շահիլ:

«Մերսետես»-ի վարորդ Ճորճ Ռաքլ գրաւեց 5-րդ դիրքը եւ իր խմբակիցէն 81 կէտերով ետ կը մնայ ընդհանուր դասաւորման մէջ:

Ստորել՝ ընդհանուր դասաւորումը.	
	ԿԵՏ
1.- Զիմի Անթօնելլի (Իտալիա), «Մերսետես»	292
2.- Ճորճ Ռաքլ (Բրիտանիա), «Մերսետես»	211
3.- Լուիս Զամիլըն (Բրիտանիա), «Ֆեռարի»	191
4.- Լանտօ Նորիս (Բրիտանիա), «Մաքլարեն»	186
5.- Շարլ Լըքլեր (Մոնաքօ), «Ֆեռարի»	167
6.- Մաքս Վերշթափեն (Նետերլանտներ), «Ռետ Պոլ»	145
7.- Օսքար Փիասթրի (Աւստրալիա), «Մաքլարեն»	120
8.- Իսաք Զածժար (Ֆրանսա), «Ռետ Պոլ»	71
9.- Լիամ Լոսըն (Նոր Չէլանտա), «Ռետ Պոլ»	59
10.- Փիեռ Կասլի (Ֆրանսա), «Ալփին»	41

ՀԵԾԵԼԱՐՇԱՒ

«ԹՈՒՐ ՕՖ ԱՐՄԻՆԻԱ»-Ն ՎԵՐՋ ԳՏԱՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ



Շաբաթավերջին Երեւանի մէջ վերջ գտաւ միջազգային «Թուր օֆ Արմինիա» հեծելաքշաւի շրջավազը, որ տեղի ունեցած էր Հայաստանի քանի մը մարզերուն մէջ:

Ընդհանուր շրջավազի ախոյեան դարձաւ իտալացի Սիմոնէ Ռաչանի (Ուքիօ խումբ), Բ. դիրքը գրաւեց դանիացի Քեվըն Պիլ (Ճեներըլ Սթոր-Էսեկիպի-Իլլի Զուրիա խումբ), իսկ այլ իտալացի մը՝ Լուքա Զովիլի (Պարտիանի Սի. Էս. Էֆ. 7 Սապեր խումբ) գրաւեց 3-րդ դիրքը:

Հայաստանի ներկայացուցիչներէն լաւագոյն արդիւնքը ձեռք ձգեց Զիրիլ Միլեր, որ 38-րդ դիրքը գրաւեց:

«Թուր օֆ Արմինիա»-ն բաղկացած էր չորս փուլերէ: Շրջավազի ընդհանուր երկարութիւնը կազմեց մօտ 587 քմ, իսկ բարձրութեան հաւաքը՝ շուրջ 5300 մետր: Մասնակիցները մրցեցան

Գեղարքունիքի, Տաւուշի, Լոռիի եւ Արագածոտնի մարզերու ճամբաներուն վրայ, իսկ աւարտական փուլը տեղի ունեցաւ Երեւանի մէջ:

Միջազգային այս առաջին շրջավազին մասնակցեցան մարզիկներ եւ խումբեր Ճափոնէն, Իտալիայէն, Ղազախստանէն, Բրիտանիայէն, Թայլանտէն, Լեհաստանէն, Փորթուգալէն, Չեխիայէն, Գերմանիայէն եւ այլ երկիրներ:

Այս շրջավազը ոչ միայն մարզական էր, իր ընդթով, այլեւ՝ զբօսաշրջային բաղադրիչ ունէր: Շրջավազը կ'անցնէր Հայաստանի գեղատեսիլ վայրերով, իսկ հեռարձակումի պահուն հանդիսատեսին կը ներկայացւէին երկրի պատմութիւնը, մշակութային ժառանգութիւնը եւ զբօսաշրջային յայտնի տեսարժան վայրերը:

ԹԵՆԻՍ

ՉՎԵՐԵԻ ՇԱՅԵՑԱՒ «ԵՈՒ. ԷՍ. ՕՓԸՆ»-Ը

Գերմանացի թենիսմէն Ալեքսանտր Չվերեւ կրցաւ շահիլ «Եու. Էս. Օփըն» թենիսի բաց մրցաշարքը, աւարտականին պարտութեան մատնելէ ետք Պեն Շելթընը՝ 6-3, 7-6, 5-7 եւ 6-2 արդիւնքով:

Չվերեւ այս տարուան իր երկրորդ կրան շլէմի մրցաշարքը կրցաւ շահիլ Ֆլաշինկ Մետոգի մէջ՝ դառնալով առաջին գերմանացի թենիսմէնը, որ Պորիս Պեքըրէն ետք (1989-ին) կը շահի Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած այս մրցաշարքին:

3 ժամ 33 վայրկեան տեւած պայքարէ ետք, Չվերեւ յաղթեց մրցումը եւ ապահովեց տիտղոսը Նոյնիսկ չնկատելով ատիկա: Երկվայրկեաններ անց ան պաստառին վրայ արդիւնքը տեսնելէ ետք տնտէրն սկսաւ...

6 տարի առաջ, 29 տարեկան Չվերեւ 2 սեթով կը յաղթեր, եւ տակաւին 2 կէտերու պէտք ունէր դառնալու տիտ-



ղոսակիր, բայց աւստրիացի Տոմիկիթ Թիեմ կրցած էր արդիւնքը յեղաշրջել եւ շահիլ: Չվերեւ այժմ չաւ աւելի փորձառու է եւ 6 կրան շլէմի աւարտականի հասնելէ ետք վերջապէս 2026-ին կրցաւ շահիլ 2 տիտղոս:

Շելթըն, որ 6 տարի աւելի երիտասարդ է Չվերեւէն, իր կարելին ըրաւ շահելու այս մրցաշարքը, բայց չկրցաւ յաջորդել Էստի Ռոտիքին (2003), որ եղած էր վերջին ամերիկացի տիտղոսակիրը՝ «Եու. Էս. Օփըն»-ի մէջ:

ՊԱՍԵՆԹՊՈԼ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՌՈՅԵԱՆ

Միացեալ Նահանգներու պասքէթպոլի աղջկանց ազգային խումբը դարձաւ աշխարհի ախոյեան՝ աւարտական մրցումին յաղթելէ ետք Ֆրանսային՝ 97-79 արդիւնքով:

Պերլինի (Գերմանիա) մէջ տեղի ունեցած աշխարհի ախոյեանութեան աւարտականին, ամերիկացիք 36 յաջորդական մրցումներ յաղթեցին 2006-ի կիսաւարտականէն ի վեր, երբ կրած էին վերջին պարտութիւնը Ռուսիայէն:

Պրիանա Սթիւըրթ 22 կէտ նշանակեց՝ ընտրուելով լաւագոյն մարզիկ («Էմ. Վի. Փի.»):

5-րդ յաջորդական տիտղոսը այնքան ալ դիւրին չէր: Ֆրանսա կիսախաղէն առաջ 14 կէտերով կը յաղթեր, բայց Սթիւըրթ եւ Ճաքի Եանկ կողովներ նշանակելով մօտեցան եւ 2 կէտ նըւազեցուցին կէտերու տարբերութիւնը մինչեւ կիսախաղ: Զեյթլըն Զլարք 3 կէտնոց կողով մըն ալ նշանակեց կիսախաղի պազըրին:

Միացեալ Նահանգներ տիրապետեցին 3-րդ մասի սկիզբէն եւ 11-2 յաջորդական կէտեր նշանակեցին: Սթի-



ըրթ, որ այժմ 4 անգամ ախոյեան դարձած է Միացեալ Նահանգներու հետ, 4 կէտ նշանակեց այդ ժամանակամիջոցին:

Ֆրանսա փորձեց փոխադարձել 55-51-ի նուագեցնելով կէտերու տարբերութիւնը, բայց Միացեալ Նահանգներ 16-3 արդիւնքով անգամ մը եւս հեռացաւ:

Պէտք է ըսել, որ Ֆրանսայի համար ալ շատ լաւ արդիւնք էր այս մէկը, որ առաջին անգամ ըլլալով կը հասնէր աւարտական մրցում:

Հիւրընկալ Գերմանիա իր կարգին կիսաւարտական հասած էր, բայց 3-րդ դիրքի մրցումին պարտութիւն կրած Սպանիայէն՝ 81-58 արդիւնքով:

Գերմանիոյ աղջկանց ազգային խումբը առաջին անգամ ըլլալով կը խաղար մետալի մրցումի մը:

ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ՎԱՌԵԼԱՆԻԻԹԻ ԳԻՆԵՐՈՒ ԱՃԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՉԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՑՈՅՑԵՐ

Սուրիոյ մէջ վառելա-նիւթի գիներու կտրուկ աճին պատճառով զանգ-ւածային բողոքի ցոյցեր սկսած են: Այս մասին կը հաղորդեն սուրիական լրատուամիջոցները:

Ցոյցերը սկսած են 13 սեպտեմբերի առաւօտեան եւ շարունակուած են ամ-բողջ օրն ու գիշերը: Ցոյ-ցեր տեղի ունեցած են Ռաքքայի, Յալէպի եւ Իտ-լիպի մէջ:

Երեկոյեան ցուցարար-ները, որոնք դժգոհ են վա-ռելանիւթի գինին 40 առ հարիւրով աճէն, փակած են Սուրիոյ առանցքային «Էմ5» մայրուղին եւ սկսած անիւներ հրկիզել: Նշեալ մայրուղին իրար կը կապէ սուրիական երկու մեծ քա-ղաքներ՝ Յալէպն ու Յամաս:

Իշխանութիւնները իրշէջ մեքենաներ, զրահա-պատ մեքենաներ եւ ոստիկանական պարեկներ ու-ղարկած են Մաարաթ Նուհմանի գլխաւոր ճամբայ:

Տեղական լրատուամիջոցներու համաձայն, 95 օքթան պենզինը կիրակի օրուընէ կ'արժէ 195 սու-



րիական լիւրա (1,6 տոլար)՝ 152-ի (1,2 տոլար) փոխա-րէն, մագուլթը՝ 175 լիւրա (1,43 տոլար)՝ 125-ի (1 տո-լար) փոխարէն:

Սուրիոյ ուժանիւթի նախարարութեան մամլոյ քարտուղար Ապտուլհամիտ Սիլիաթ ՍԱՆԱ պետա-կան լրատու գործակալութեան յայտնած է, որ վառե-լանիւթերու գիները բարձրացած են համաշխարհա-յին շուկաներուն մէջ տիրող իրավիճակի եւ ներած-ման զգալի բաժինի պատճառով:

ԼԵՌՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ. «ԳԱՆՉԱՍԱՐԻ ԱՐԺԷՔԱՌՐ ԳԻՐՔԵՐԸ ...»

Շարունակուած Ա. Էջէն

Մինչդեռ Լեռնիկ Յովհաննիսեան կը նշէ, որ Գան-ձասարի մատենադարանը, որ Յայաստանի Մատե-նադարանի մասնաճիւղն էր, իր տնօրինութեան տակ գտնուող արժէքաւոր գիրքերը, նաեւ տպագիր այլ արժէքաւոր գիրքեր ապահով վայր տեղափոխած էր տակալին 2020-ի 44-օրեայ պատերազմի ընթացքին: Յուցարահին մէջ մնացած էին միայն նմուշները, իսկ մշակութային արժէքները դուրս բերուած էին:

«Յաճնելի ցուցադրութիւնը հերթական ձեռնածու-թիւնն է: Ինչ կը վերաբերի անոնց վրայ ծիծաղող դի-

ւանագետներուն, ապա անոնք շատ լաւ կը հասկնա-յին, շատ լաւ գիտէին, թէ ի՞նչ տեղի ունեցած է: Իրենք ուղղակի պէտք էր հաւատային՝ կը հաւատային: Նոյն Կրոնոն, միւս դիւանագետները, այնտեղ կային նաեւ Միխըի խմբակի համանախագահ երկիրներու դիւա-նագետներ: Իրենք տեղեակ չէ՞ին այդ խնդրի մասին, ի հարկէ շատ լաւ տեղեակ էին: Ուղղակի այսօր պէտք է այդ քաղաքականութիւնը վարել, կը վարեն», «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանին հետ գրոյցի լեթացքին ըսաւ Լեռնիկ Յովհաննիսեան:

ԱՐԱՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԿԸ ՅՈՒՍԱՆՔ, ՈՐ «ԻՐԱԿԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆԷՆ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Խոր ցաւով ու ընդվզումով դիտեցինք ընկերային ցանցերը ողորած այս տեսերիզները (video-ները): Յայաստանի «բարեկամները» կը պարեն Շուշիի մէջ եւ «հիպոցումով» կը դիտեն ու կը լսեն՝ մեր սուրբերու աղօթքով, նահատակներու արիւնով ու ժողովուրդին ստեղծագործ ոգիով դարերու ընթացքին կանգնած մեր եկեղեցիները ու պատմամշակութային կոթողնե-րը որպէս ալպանական կառոյցներ: Պատմութեան ի՞նչ ահաւոր խեղաթիւրում մեր աչքերուն դիմաց...

ԿՐՈՆՕ. «ՂԱՐԱԲԱՂԻ՝ ՆԱԿԱՊԵՍ ԶԱԿԱՍԱՐՏՈՒԹԵՆԵՆ ՏՈՒԺԱԾ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Ուրախ եմ, որ այսօր կարելիութիւն ունեցայ այ-ցելել Մատենադարան եւ տեսնել հայկական հնա-գոյն հրաշալի հաւաքածոները: Ես տեսայ այդ ժա-ռանգութեան իսկական գեղեցկութիւնն ու խորհուր-դը եւ խորապէս տպաւորուած եմ: Շատ շնորհակալ եմ ընդունող կողմին այս կարելիութիւնը ընձեռելու համար եւ համոզուած եմ, որ մշակութային ժառան-գութեան պահպանումն ու ատոր աջակցիլը ոչ միայն խաղաղութեան գործընթացներու կարեւոր մասն են, այլ նաեւ էական արժէք են Եւրոպական Միութեան համար», շեշտեց Մակրալեւս Կրոնօ:

Կրոնօ նախապէս այցելած է բոնադրուած Ար-ցախ, որմէ ետք ընկերային ցանցերու վրայ գրառում կատարած՝ նշելով՝ «որոշ վայրերու ծագման վերա-բերեալ խորապէս տարբերող տեսակետներ ու պատ-մութիւններ կան»՝ չյտակացնելով, սակայն, թէ ի՞նչ նկատի ունի: Այդ գրառումը Յայաստանի մէջ քննա-

դատութիւններու առիթ հանդիսացած էր:

«Արմէնփրես»-ի թղթակիցի հարցումին, թէ Եւրո-պական Միութեան ներկայացուցիչը ինչպե՞ս կը մեկ-նաբանէ իր այդ գրառումը, Կրոնօ պատասխանեց. «Ես, անշուշտ, չեմ վիճարկել Ղարաբաղի՝ նախա-պէս հակամարտութենէն տուժած շրջաններուն մէջ անցեալիկ հայկական ներկայութիւնն ու հարուստ հետքը: Անցեալ շաբաթ Զեյթաշարի (այցելած է Դա-դիվանք, «Ա.») եւ Աղտարայի (այցելած է Գանձասար, «Ա.») շրջաններ կատարած այցելութեան ընթացքին առաջին անգամ կարելիութիւն ունեցայ անձամբ հա-մոզուելու ատով: Ուրախ էի նաեւ այսօր կրկին այցե-լելու Երեւանի Մատենադարան: Այս ժառանգութիւնը պէտք է պահպանել եւ արժեւորել՝ գերծ մնալով չիիմ-նաւորուած քաղաքականացումէն եւ շահարկումնե-րէն»:

ԸԱՅ. «ՅԸՉՊԱՍԼԼԱՅԻ ՉԻՆԱԹԱՓՈՒՄԵՆ ԱՌԱՋ ...»

Շարունակուած Ա. Էջէն

Իւրայելի պաշտպանութեան նախարարը շեշ-տեց, որ Ալի Թահեր բարձուքներու շրջանին մօտե-ցող ռեւէ մէկը պիտի վնասագերծուի:

Իւրայելեան պատկերասփիւռի 12-րդ կայանը, սակայն, հաղորդեց, որ Իւրայել լիբանանեան բանա-կի Ալի Թահեր բարձուքներ եւ անոնց մերձակայ շըր-ջաններ մուտքի կարելիութիւնը կը սերտէ:

Իւրայելեան «Ճերուզալեմ Փոսթ» օրաթերթը հա-

ղորդեց, թէ իւրայելեան բանակը լիբանանեան բա-նակը կը մեղադրէ Յըզպալլայի դէմ միայն «ձեւա-կան» քայլեր որդեգրելու յանցանքով:

Լիբանանեան աղբիւրներ, սակայն, իւրայելեան «Ուալլա» կայքին յայտնած են. «Վերջին օրերուն, հակառակ իւրայելեան քննադատութիւններուն, լի-բանանեան բանակը շրջանին մէջ Յըզպալլայի են-թակառոյցներուն եւ անդամներուն դէմ կը գործէ»:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ...

Շարունակուած 2-րդ էջէն

●ԻՍՐԱՅԷԼԵԱՆ «Մաարիս» օրաթերթ. «Յըզպալ-լան տակալին անձնատուր չեղաւ, եւ Իւրայել պետք է արագ կերպով աշխատի լիբանանեան կառավա-րութիւնը ամրապնդելու համար»:

●ԻՐԱՆԵԱՆ «Ֆարս» լրատու գործակալութիւն. «Լրատուամիջոցներու պնդումը, թէ հարաւային Լի-բանանի Ալի Թահեր փապուղիին մէջ Իրանի Յեղա-փոխական պահակազուկի շարք մը անդամներ պաշարուած են, ճիշդ չէ»:

●ԵԼԵԻՍՈՒՏԷԻ նախարար ժապեր «Տիար» օրա-թերթին. «Դրամատուներու բարեփոխման օրէնքի որոշումը բացառապէս բարեկարգչական է, սակայն իմիասական ելեմէտական բացի օրինագիծի որդեգ-րումն է: Բարեկարգումներու գնացքը յառաջ կ'ընթա-նայ, սակայն դանդաղ կերպով, եւ ներկայ փուլին առաջնահերթութիւնը բարեկարգչական աշխատան-քի թափը պահպանելն ու իրագործուածին վրայ կա-ռուցելն է»:

ՕՍԱՆԻ ՄԵՋ ԻՐԱՆ-ՇՈՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

տիրող լարուածութեան պատճառով:

«Այո՛, ատիկա ճիշդ է: Յանդիպումը յետաձգուած է Սեւուական Արաբիոյ ինկորսներով: Ատիկա կապուած է այն ամէնի հետ, ինչ որ այժմ տեղի կ'ունե-նայ անոնց եւ Եմէնի միջեւ», մամլոյ ասուլիսի ընթացքին ըսաւ Պաղայի:

Անոր համաձայն, հանդիպումի ըն-թացքին, բացի շրջանային հարցերէն, պիտի քննարկուին Զորմուզի նեղու-ցին մէջ առեւտրական նաւարկման անվտանգ երթուղիներու որոշման շուրջ իրանական-օմանեան բանակ-ցութիւններու արդիւնքները:

Օմանի արտաքին գործոց նախա-րար Պատր Պուսահիտի կիրակի գի-շեր յայտարարեց, թէ Սալալայի մէջ ժողովը այլ թուականի յետաձգուած է՝ պատրաստուելու համար պայմանները երկխօսութեան մը, որ շրջանի անվը-տանգութեան ու կայունութեան նպաստող փոխըմբռնումներու կը յան-գի:

Պուսահիտի ըսաւ, թէ յետաձգման որոշումը տրուած է ստեղծելու համար կառուցողական երկխօսութեան հա-մար համապատասխան պայմաններ, որոնք պիտի նպաստեն ձեռք բերելու փոխըմբռնումներ, որոնք պիտի ա-ջակցին շրջանի անվտանգութեան ու կայունութեան եւ բաւարարեն անոր ժողովուրդներուն համագործակցու-թեան ու խաղաղութեան ձգտումները:

11 սեպտեմբերին, Իրանի արտա-քին գործոց նախարարութեան բան-բեր Իսմայիլ Պարոյի հաստատած էր այդ հանդիպումին իրանեան կողմի մասնակցութիւնը:

Օմանի արտաքին գործոց նախա-րարը երէկ ալ յայտարարեց, թէ Զոր-մուզի նեղուցը պիտի վերաբացուի, եւ հաւանական է, որ նեղուցին մէջ խա-հանումները, հաւանաբար, կարճա-տեւ ըլլան:

Ան աւելցուց, որ իրավիճակը պէտք է կայունանայ միջնաժամկէտ հեռանը-կարի մէջ՝ նշելով, որ անհրաժեշտ է բազմազան դարձնել ելքի կետերը եւ բացայայտել արտածման այլընտրան-քային տարբերակներ՝ ըլլալ այդ Օմա-նի, թէ Եմէնի միջոցով:

Պուսահիտի նաեւ գոհունակութիւն յայտնեց, որ Օմանը տակալին կը կա-րողանայ շարունակել քարիւղի եւ կա-զի արտադրումը:

Իրանի Յեղափոխական պահակա-զունը երէկ յայտարարեց, թէ վար առած է Զորմուզի նեղուցին վերեւ թռիչք կատարող ամերիկեան «Էմ. Զիու1» տիպի անօդաչու թռչող սարք մը:

«Սի.Էն.Էս.» հաղորդեց, որ Միաց-եալ Նահանգներ կ'ուզեն Իրանի հետ բանակցութիւններուն մէջ վերադառ-նալ հիւլէական ծրագիրի քննարկման: Ըստ պատկերասփիւռի կայանի տեղեկութիւններուն, Միացեալ Նա-հանգներու նախագահ Տանըլտ Թրամփի վարչակազմի պաշտօնա-տարները Արաբական ծոցի երկիրնե-րու ներկայացուցիչներուն հետ անձ-նական գրոյցներու ընթացքին յայտ-նած են, որ Ուաշինկթըն պիտի ցան-

կար որեւէ ապագայ բանակցութիւն-ներու կիզակետը տեղափոխել Թեհ-րանի հիւլէական ծրագիրին՝ Զորմուզի նեղուցին մէջ նաւարկութեան վերա-կանգնման փոխարէն:

Իրանի ներկայացուցիչները իրենց կարգին շրջանային դերակատարնե-րուն հասկցուցած են, որ Թեհրանը դրական տրամադրուած պիտի ըլլայ հիւլէական ծրագիրի քննարկման հա-մար միայն Զորմուզի նեղուցի հարցի կարգաւորումէն, ներառեալ Իրանի նաւահանգիստներուն դէմ ամերիկե-եան շրջափակման վերացումէն ետք:

Իրանի Պարսից ծոցի վերահսկո-ղութեան վարչութիւնը հրապարակած է ցանկ մը 77 նաւերու, որոնք խախ-տած են Զորմուզի նեղուցին մէջ նա-ւարկման կանոնները եւ այժմ պիտի բախին հետեւանքներու՝ մինչեւ կըրկ-նակի անցման փորձի պարագային նաւի գրամման:

«Նաւերը, որոնք կը խախտեն Զոր-մուզի նեղուցին մէջ իրանեան նաւագ-նացութեան արձանագրութիւնները, պիտի բախին հետագայ անցումներու սահմանափակումներու, ներառեալ տուգանքներու, ձեռքակալութեան կամ գրամման», կը նշուի գերատես-չութեան յայտարարութեան մէջ:

Վարչութիւնը նաեւ Արաբական ծո-ցի շրջանին մէջ փոխարդումներ կա-տարող բոլոր բեռնատրեքներուն կոչ ուղ-ղած է՝ հետագայ խնդիրներէն խուսա-փելու համար ստուգել ցանկը:

Իրանի Պարսից ծոցի վերահսկո-ղութեան վարչութիւնը գոլուշացուցած է, որ ցանկին վրայ ընդգրկուած նաւե-րուն հետ նաւահանգիստէ՝ Նաւահան-գիստ փոխքեռնման կամ վերաբեռնը-ման միջոցով համագործակցող որեւէ նաւ ցանկին վրայ պիտի աւելցուի:

Յիւլէական ուժանիւթի միջազգա-յին գործակալութեան ղեկավար Ռա-ֆայել Կրոնի յայտնեց, որ գործակա-լութիւնը դարձեալ իր ձեռքը կ'երկարէ Իրանին՝ հրաւիրելով միացեալ աշխա-տանքի՝ հիւլէական ծրագիրին վերա-բերող հարցերը պարզաբանելու հա-մար:

«Առանց գործակալութեան հետ երկխօսութեան վերսկսման՝ Իրանի հետ յարաբերութիւններուն մէջ չեն կըր-նար ըլլալ ո՛չ կանխատեսելիութիւն, ո՛չ երաշխիքներ, ո՛չ ալ վստահութիւն: Յիւլէական ուժանիւթի միջազգային գործակալութիւնը յարգանքով պիտի վերաբերի անվտանգութեան ոլորտին մէջ Իրանի մտահոգութիւններուն եւ հաշուի պիտի առնէ այն դժուարու-թիւնները, որոնց այդ բնագաւառին մէջ կը բախի երկիրը», նշեց Կրոնի:

Ան նաեւ ընդգծեց, որ երաշխիքնե-րու եւ իրանեան հիւլէական ծրագիրի բացառապէս խաղաղ բնոյթի հաս-տատման ուղղութեամբ աշխատանքը պէտք է շարունակուի:

Յիւլէական ուժանիւթի միջազգա-յին գործակալութեան ղեկավարը յայ-տարարած է, թէ այս հարցի կարգա-ւորման հեռանկարներուն նկատմամբ յամառօրէն լաւատես է:

ԿԱԼԵՍԻ, ՍԿՈՎՏԻՈՅ ԵՒ ՅԻՄԻՍԱՅԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն

պատրաստուելու, ծրագրելու եւ ապահովելու սահմանադրական փո-փոխութիւններ իւրաքանչիւր իրաւա-տութեան մէջ, որպէսզի շրջանները կարելիութիւն ունենան կազմակեր-պելու Բրիտանիայէն դուրս գալու հանրաքուէներ:

Յուլեգիրին մէջ կը նշուի, որ Յիւ-սիսային Իրլանտան, Կալէսը եւ Սկո-տիան իրենց ապագան կը տեսնեն Եւ-րոպական Միութեան կազմին մէջ: Անդրադառնալով նաեւ տնտեսական հարցերուն՝ կը նշուի, որ առաջին նա-խարարները մտադրուած են ուժե-րացնել իրենց միջեւ համագործակ-ցութիւնը:

Զարտիֆի վեհաժողովէն երկու օր առաջ, Միացեալ Նահանգներու նա-խագահ Տանըլտ Թրամփ Տապլինի մէջ Իրլանտայի վարչապետ Միխոլ Մարթինի հետ հանդիպումի ընթաց-քին յայտարարած էր, թէ պիտի ուզեր տեսնել հանրապետութեան միաւո-րումը Յիւսիսային Իրլանտայի հետ: Բրիտանիոյ վարչապետ Էնտրի Պըռն-համը 27 օգոստոսին Պելֆաստ իր այ-ցելութեան ժամանակ բացառած էր Յիւսիսային Իրլանտայի՝ Իրլանտայի Յանրապետութեան հետ միաւորելու հանրաքուէի կատարումը:

«Էռ.Թէ.Է» պատկերասփիւռի կա-յանի տեղեկութիւններով՝ Օ'Նիլը, Ափ Եորվերթը եւ Սուինին հանդիպումին մասնակցած են ոչ թէ իբրեւ Յիւսիսա-յին Իրլանտայի, Կալէսի եւ Սկոտիոյ առաջին նախարարներ, այլ համա-պատասխանաբար իբրեւ «Շինն Ֆէյն» ազգային-հանրապետական կուսակցութեան, ծախ ազգայնական Կալէսի կուսակցութեան եւ Սկոտ-տիական ազգային կուսակցութեան ներկայացուցիչներ:

Նախապէս Օլսթերի առաջին փոխ-նախարար Էմմա Լիթլ-Փենկելին յայտարարած էր, որ Օ'Նիլը լիազօրու-թիւն չունի՝ իբրեւ շրջանի ղեկավար առանց լիազօրութեան որեւէ փաս-տաթուղթ ստորագրելու: Յիւսիսային Իրլանտայի մէջ իշխանութեան հա-մակարգը՝ համաձայն Պելֆասթի հա-մաձայնագիրին, կառուցուած է այն-պէս, որ կարեւոր որոշումներու որ-դեգրման համար անհրաժեշտ է թէ՛ առաջին նախարարի, թէ՛ ալ անոր տեղակալի աջակցութիւնը, որոնք կը ներկայացնեն տարբեր ազգային-կու-նական համայնքներ՝ կաթողիկէ-հան-րապետականները եւ բողոքական-միութենականները: